

---

---

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Энергетика, инновации и знание. Нидерланды стремятся стать лидером ( <i>ծառայողական</i> ) .....	4
Դիտարկում «Russian energy and european security: a transatlantic dialogue» գեկույցի վերաբերյալ .....	6
Рычаг влияния в виде газового вентиля: критика Запада и активность России .....	10
Նեղուցների խնդիրը և Սամսուն-Ջեյհան նավթամուղը .....	13
Մասաչից ծովի կարգավիճակը և Թուրքմենստան-Ադրբեջան- Իրան լարվածությունը .....	22
Հիդրոէներգետիկա. վիճակագրական վերլուծություն .....	25
Новости ТЭК Южного Кавказа и Каспия (9 апреля – 19 мая) .....	30

## **ЭНЕРГЕТИКА, ИННОВАЦИИ И ЗНАНИЕ. НИДЕРЛАНДЫ СТРЕМЯТСЯ СТАТЬ ЛИДЕРОМ**

*Во время прошедшей с 11 по 16 апреля в столице Иордании Аммане конференции, посвященной энергетической безопасности, устойчивому развитию и альтернативной энергетике, организованной правительством нидерландской провинции Гронинген, были представлены на обсуждение проекты, которые могут считаться удачными примерами сочетания инноваций и энергетики, энергетики и экономики знания.*

### ***Город «Меерштад» – модель для будущей Европы***

На прошедшей в Иордании международной конференции голландские специалисты впервые представили аналитическому сообществу проект строительства нового города Меерштад в нидерландской провинции Гронинген.

Новый город, проект которого составлен с участием крупнейших голландских энергетических институтов и строительных компаний, будет существовать исключительно за счет возобновляемых источников энергии. Меерштад должен быть построен в течение ближайших 12 лет и будет рассчитан, как минимум, на 150 000 жителей. Меерштад будет первым в мире крупным населенным пунктом, который будет существовать исключительно за счет возобновляемых источников энергии: ранее те же голландские специалисты построили две маленькие деревни, в которых производство электричества и обогрев воды осуществлялись исключительно за счет ветряной и солнечной энергетики.

Голландские специалисты при строительстве нового города Меерштад будут использовать все самые новые и современные достижения энергетических знаний: ветряная, солнечная, биотермальная энергия, биогаз, биодизель – все эти виды энергии будут играть свою роль в обеспечении нового города электричеством, теплой водой, отоплением. Биодизель должен стать основой функционирования городского транспорта.

Голландские власти не скрывают, что стремятся сделать Меерштад моделью для будущей европейской энергетической системы. С этой целью сегодня активно разрабатываются схемы и технологии перевода уже существующих городов и населенных пунктов на использование возобновляемых источников энергии. Голландия является безусловным европейским лидером в разработке технологий, позволяющих использовать возобновляемые источники для производства энергетических продуктов. С этой точки зрения проект Меерштада – не просто результат достижений голландской энергетической политики. Меерштад – заявка на превращение Голландии из лидера в исследованиях альтернативных видов энергии в фактического монополиста, обладающего технологиями всех самых современных видов производства энергетических продуктов без использования нефти, газа и природного урана.

### ***Энергетика и инновации. Голландцы утверждают, что сделали правильный выбор***

После того, как в 1959-м году в Голландии обнаружили крупные запасы природного газа, Нидерланды стали ключевым игроком на европейском газовом рынке. Через много лет, после того, как перегретая нефтяными и газовыми деньгами голландская экономика встала перед реальной угрозой превращения в сырьевую по сути, голландское руководство начало искать активные пути для дальнейшего развития и преодоления экономических последствий зависимости от нефтегазовых доходов. Снижение доли рентных нефтегазовых доходов в общей доле нацио-

нального дохода – только часть шагов, которые предприняло голландское правительство. В начале 1990-х, когда стало понятно, что газовые запасы Нидерландов исчерпаемы в среднесрочной перспективе, голландское правительство приняло ряд решений, которые должны были разрешить часть будущих проблем и стать основой для будущего развития национальной экономики:

1. Резко сократить добычу природного газа в Гронингене;
2. Финансово поддерживать деятельность институтов, занимающихся исследованиями альтернативных источников энергии;
3. Финансировать образовательные программы по энергетике.

В конце 1990-х благодаря крупным финансовым вливаниям, университет Гронингена начал приглашать на работу крупных и известных ученых – энергетиков, физиков, экономистов, политологов, которые занимались и занимаются актуальными проблемами энергетической политики. В результате сегодня *Гронингенский университет* – крупнейшее образовательное учреждение в мире, в котором ведутся исследования, связанные с энергетикой и энергетической безопасностью. Опыт Гронингенского университета – яркий пример использования экономики знаний в энергетике.

Созданный с участием Гронингенского университета, ОАО «Газпром», «Газ д’Эни» *Energy Delta Institute* – другой голландский центр, который претендует стать мировым лидером уже в исследовании политических, экономических и юридических аспектов международной энергетической безопасности. Прекращение финансирования со стороны ОАО «Газпром» в 2007-м году сильно ударило по Институту, но сегодня *Energy Delta Institute* имеет все шансы стать одним из ведущих европейских центров, финансирующихся напрямую со стороны Европейского союза.

Интегрируя опыт и потенциал как *Гронингенского университета*, так и *Energy Delta Institute* голландское правительство начало реализацию проекта, который призван обеспечить закрепление будущего лидерства Голландии в системе европейской энергетической безопасности. Разработан проект создания «Энергетической долины» – *Energy Valley*. Сам проект очень напоминает американскую Силиконовую долину, и авторы проекта из *Energy Delta Institute* не скрывают, что стремятся создать именно нечто подобное американского высокотехнологического пространства, но уже энергетического.

В Энергетической долине, как предполагает правительство Нидерландов, должны быть расположены головные представительства всех крупных европейских энергетических компаний. Сюда же должны быть перенесены крупнейшие европейские научно-исследовательские организации, занимающиеся энергетическими исследованиями. В частных беседах авторы проекта говорят, что в Энергетическую долину перейдут все крупные европейские компании и центры не то только из-за того, что тут, возможно, будет легче координировать свою деятельность, контакты, проекты. Энергетическая долина может стать социальным проектом: это будет первый в Европе корпоративно-профильный городок, жить в котором для работников энергетической сферы будет намного приятнее, чем в крупных, многонациональных, мультикультурных и нестабильных столицах ЕС.

Правительство Нидерландов и руководство Энергетической долины планируют в дальнейшем создать на территории Энергетической долины крупнейшую в мире Товарно-сырьевую биржу для альтернативных источников энергии. Проект создания Энергетической долины должен быть осуществлен в период с 2008-го по 2017 гг.

Многие эксперты говорят, что, несмотря на многие недостатки и недочеты разработок голландских специалистов и руководителей, Нидерланды в основном преуспеют в своих планах превращения в главный европейский энергетический центр. Основной ресурс для этого – потенциал знания и образования, который в Европе чаще всего находит возможность реально воплотиться в экономике и социальной среде.

**Севак Саруханян**  
**Фонд «Нораванк»**

## ԴԻՏԱՐԿՈՒՄ «RUSSIAN ENERGY AND EUROPEAN SECURITY: A TRANSATLANTIC DIALOGUE» ԶԵԿՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Վաշինգտոնում գործող «The Nixon Center»-ը հրապարակել է «Ռուսական էներգիան և եվրոպական անվտանգությունը. անդրատլանտյան երկխոսություն» (անգլ.՝ «*Russian Energy and European Security: A Transatlantic Dialogue*») վերնագրով զեկույցը, որն արդյունք է 2007թ. ընթացքում Գերմանիայում («*Stiftung Wissenschaft und Politik*», Բեռլին), Միացյալ Նահանգներում («*The Nixon Center*», Վաշինգտոն) ու Մեծ Բրիտանիայում («*Chatham House*», Լոնդոն) կազմակերպված փորձագիտական բավականին բարձր մակարդակի քննարկումների<sup>1</sup>:

### Դիտարկում

Զեկույցում որպես *խնդիր* են ձևակերպված հիմնականում հետևյալ չորս կետերը.

**Ա.** Թեև Ռուսաստանի չափաբաժինը Եվրամիության (ԵՄ) բնական գազի ներմուծումների մեջ 51%-ից (2000թ.) իջել է 41%-ի (2007թ.), սակայն 41%-ը նույնպես բավական բարձր թիվ է դիտվում հենց Ռուսաստանի պարագայում: Բացի այդ, ըստ զեկույցի, միայն Մոսկվան բավարարում է բնական գազի ոլորտում ԵՄ պահանջի<sup>2</sup> 27%-ը, Ռուսաստանի չափաբաժինը ԵՄ նավթի ներմուծումների մեջ կազմում է 30%, իսկ ռուսական սև ոսկին բավարարում է նավթի ԵՄ պահանջի 15%-ը:

**Բ.** ԵՄ համար որպես բնական գազի այլընտրանքային աղբյուրներ են դիտարկվում Հյուսիսային Աֆրիկան, Կատարը և Իրանը: Հյուսիսային Աֆրիկայի պարագայում նշվում է, թե այնտեղ առկա կարողությունները բավարար չեն առաջին կետում նշված խնդիրը լուծելու համար: Կատարի հետ գազամուղի բացակայությունն իրական է դարձնում միայն հեղուկ բնական գազի (*Liquefied Natural Gas - LNG*) ներմուծման տարբերակը, սակայն քիչ հավանական է դիտվում, որ Կատարը կարողանա զարգացնել բավարար քանակությամբ հզորություններ՝ հարցին լուծում տալու համար<sup>3</sup>: Իրանի պարագայում հարցն էլ ավելի բարդ է: Նախ, կառուցվող «*Nabucco*» գազամուղը կարող է բավարարել բնական գազի ոլորտում ԵՄ պահանջի միայն 1%-ը: Երկրորդ, Իրանից բնական գազի ներմուծումը Թեհրանին շնորհում է լրացուցիչ լծակ ԱՄՆ-ի նկատմամբ, ինչը «կարող է էական լարվածություն առաջացնել Եվրոպայի ու Միացյալ Նահանգների հարաբերություններում»<sup>4</sup>: Այսինքն՝ նաև ռուսական էներգետիկ

<sup>1</sup> Չնայած Փոլ Սանդերսը (*Paul J. Saunders*, «*The Nixon Center*»-ի գործադիր տնօրեն) միայնակ է հեղինակել զեկույցը, սակայն այնտեղ ներկայացված են նաև նշված երեք կենտրոններում թեմայի առնչությամբ տեղ գտած վերլուծություններն ու դատողությունները:

<sup>2</sup> Զեկույցում «պահանջ» ասելով՝ հեղինակը նկատի ունի ոչ միայն ներմուծված բնական գազի կամ նավթի ծավալը, այլև տեղում արդյունահանվածինը, այսինքն՝ ԵՄ-ում, ընդհանուր առմամբ, սպառված բնական գազի կամ նավթի չափաբաժինը:

<sup>3</sup> Զեկույցի հեղինակն այստեղ հաշվի է առնում առաջիկա տարիներին բնական գազի սպառման ոլորտում ԵՄ-ին սպասող դժվարությունները, որոնց մասին կխոսվի «Դինամիկա» բաժնում: Այսինքն՝ Կատարը պարզապես չի հասցնի ԵՄ-ի համար անհրաժեշտ ժամանակահատվածում զարգացնել բավարար քանակությամբ հզորություններ՝ հարցին լուծում տալու համար:

<sup>4</sup> Զեկույցում կանխատեսվում է, որ առաջիկայում եվրոպական ընկերությունները կձգտեն պայմանավորվածությունների հանգել Թեհրանի հետ բնական գազի ոլորտում: Օրինակ, հայտնի է, որ մարտին շվեյցարական «*Elektrizitaetsgesellschaft Laufenburg*» (*EGE*) և իրանական «*National Iranian Gas Export Company*» ընկերությունները ստորագրեցին մի պայմանագիր, ըստ որի՝ յուրաքանչյուր տարի Իրանը պետք է Շվեյցարիային մատակարարի 5.5 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ: Գործարքի արժեքը գնահատվեց €10-22 մլրդ-ի սահմաններում: Այն հարուցել էր Վաշինգտոնի դժգոհությունը:

քաղաքականության արդյունքում բնական գազի ոլորտում եվրա-իրանական համագործակցության խորացումը նույնպես դիտվում է որպես կարևոր խնդիր:

Գ. Խնդիր է դիտվում Ռուսաստանի նկատմամբ եվրոպական միասնական արտաքին ու էներգետիկ քաղաքականությունների բացակայությունը: Օրինակ է բերվում Մոսկվայի նկատմամբ առկա գերմանական ու բրիտանական մոտեցումների տարբերությունը, երբ Բեռլինը փորձում է Ռուսաստանի հետ համագործակցության միջոցով ապահովել էներգա-կիրների անխափան մատակարարումը, իսկ Լոնդոնը հատկապես վերջերս լարված հարաբե-րություններ ստեղծեց Մոսկվայի հետ:

Դ. Եվ վերջապես, որպես խնդիր են դիտվում Ռուսաստանի այդ թվում էներգետիկ քաղաքականության նկատմամբ ԵՄ-ում ու ԱՄՆ-ում առկա տարաձայնությունները: «[Եվրոպա-ցիները գտնում են, որ] Ամերիկյան կարող է սխալվել Ռուսաստանի հետ հարաբերություններում, բայց Եվրոպան չի կարող. Ռուսաստանը [իրենց] շատ մոտ է», - նշված է զեկույցում: Զեկույցի հեղինակը, փաստորեն, ընդունում է, որ ԵՄ-ը չի սատարի ռուսական առկա էներգե-տիկ քաղաքականությանն ի պատասխան ԱՄՆ-ի կողմից երբեմն առաջարկվող կոշտ հակաքայլերը, ու նաև այդ պատճառով անհեռանկարային է դիտվում Վաշինգտոնի կողմից հրապարակ իջեցված «էներգետիկ ՆԱՏՕ-ի» նախագիծը: Զեկույցը գտնում է, որ պարզ չէ, թե ՆԱՏՕ-ն ինչպես է պատասխանելու էներգետիկ մարտահրավերներին, ու բացի այդ, եվրոպա-կան կառավարությունները հավանություն չեն տա, որ տնտեսական հարցերին տրվի ռազմա-կան պատասխան: Որպես Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության նկատմամբ ամե-րիկա-եվրոպական հակասությունների պատճառ հեղինակն առանձնացնում է հետևյալը.

- ի տարբերություն ռուս-եվրոպական լուրջ էներգետիկ համագործակցության, նշված ոլորտում ԱՄՆ-Ռուսաստան փոխգործակցությունը գրեթե բացակայում է,
- եթե ԱՄՆ-ի համար «էներգետիկ անվտանգություն» ասվածը առաջին հերթին վերաբե-րում է նավթին, ապա ԵՄ պարագայում այն նախ առնչվում է բնական գազին, ուստի Ռուսաստանի հետ լավ հարաբերությունների պահպանումը կարևոր է եվրոպացիների համար:

Հարցի *դինամիկան* ներկայացված է հետևյալ կերպ.

- Ներկայում ԵՄ անդամ երկրներում առկա բնական գազի սպառման տարեկան 3-4% աճը արդեն 2015թ. հանգեցնելու է մի իրավիճակի, երբ բնական գազի ոլորտում ԵՄ պահանջի 23%-ը (կամ մոտ 200 մլրդ մ<sup>3</sup>) կմնա չբավարարված՝ առանց ներմուծումների չափաբաժնի ավելացման: Այսինքն՝ ռուսական էներգետիկ քաղաքականության հարցը հանդես է գալու ավելի սուր ձևով՝ նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ եվրա-իրանական հարաբերությունների խորացման առնչությամբ ԱՄՆ ենթադրվող ճնշում-ները եվրոպական երկրների նկատմամբ ԵՄ-ին կարող են դրդել բնական գազի սեփա-կան կարիքները բավարարել դարձյալ ի հաշիվ ռուսական կապույտ վառելիքի:
- Առաջիկայում Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության նկատմամբ ԵՄ երկրնե-րի միջև հակասություններն էլ ավելի կաճեն: Հետևաբար, էլ ավելի քիչ հավանական է, որ ԵՄ-ին հաջողվի միասնական քաղաքականություն իրականացնել Մոսկվայի ուղղու-թյամբ կամ որդեգրել կոշտ դիրքորոշում Կրեմլի հանդեպ՝ «անգամ եթե Ռուսաստանը դառնա ավելի ագրեսիվ իր արտաքին քաղաքականությունում»:
- Ռուսաստանը կշարունակի իր գազային առաքումներն օգտագործել արտաքին քաղա-քական խնդիրների լուծման համար: Թեև զեկույցը նշում է, որ այդ քաղաքականությունը մի մեծ մասով վարվելու է Եվրոպայի՝ նախկին սոցճամբարի մասը հանդիսացող երկր-ների ուղղությամբ և քիչ հավանական է, որ այն ուղղվի Արևմտյան Եվրոպայի մեծ պե-տությունների դեմ: Միևնույն ժամանակ, կարծիք կա, որ նույն նպատակներով Ռուսաս-տանը դժվար թե կիրառի իր նավթային առաքումները, քանի որ եվրոպական երկրները կարող են ազատորեն նավթ գնել միջազգային շուկայից, ինչը բացակայում է բնական գազի պարագայում:

- Քիչ հավանական է, որ Միացյալ Նահանգները կարողանա ստանալ եվրոպական երկրների (այստեղ հեղինակը նկատի ունի արևմտաեվրոպական մեծ երկրների) աջակցությունը Մոսկվայի դեմ կոշտ քաղաքականություն վարելու հարցում:

Զեկույցի հիմնական *եզրակացությունն* այն է, որ օգտագործելով իր էներգետիկ քաղաքականությունն ու որոշակի հաջողությունների հասնելով եվրոպական երկրների նկատմամբ սեփական ազդեցության մեծացման ուղղությամբ՝ Մոսկվան փորձում է ռազմավարական առումով վերաձևել իր և Արևմուտքի միջև առկա փոխդասավորվածությունը, որը ստեղծվել է Սառը պատերազմը ավարտից հետո և 1990-ական թթ. ընթացքում, երբ Մոսկվան շատ թույլ էր: Փոլ Սանդերսը մեջբերում է եվրոպացի մի փորձագետի գնահատականը, ով Եվրոպայում Ռուսաստանի նոր, առաջին հերթին՝ էներգետիկ քաղաքականությունը բնութագրել է որպես «նոր Յալթա» նկատի ունենալով սահմանների կամ այս պարագայում՝ ազդեցությունների վերաբաշխումը:

Եվ վերջում, որպես *առաջարկություններ* ԱՄՆ քաղաքականության համար, զեկույցն առանձնացնում է հիմնականում հետևյալ կետերը.

- ուժեղացնելով անդրատլանտյան համագործակցությունը՝ ԱՄՆ-ը պետք է հասնի իր նախկին (թերևս, նկատի է առնվում Սառը պատերազմի ժամանակահատվածի) ազդեցության վերականգնմանը Եվրոպայում, քանի որ եվրոպական թատերաբեմում Վաշինգտոնը չի կարող արդյունավետ պայքարել Մոսկվայի դեմ՝ առանց եվրոպական մեծ երկրների աջակցության,
- ԱՄՆ-ը չպետք է Ռուսաստանի հետ մրցի էներգետիկ ոլորտում, ուր Վաշինգտոնը ոչինչ չի կարող առաջարկել Եվրոպային (այստեղ նախ և առաջ նկատի ունի բնական գազի ապահովման հարցը), այլ պետք է մրցի այնպիսի բնագավառներում, ուր, զեկույցի համաձայն, ամերիկյան կարողությունները գերազանցում են ռուսականին՝ քաղաքական, տնտեսական, ռազմական ու մշակութային բնագավառներ,
- ԱՄՆ-ը պետք է «կարմիր գծեր» սահմանի Ռուսաստանի համար և հստակորեն հայտարարի, որ այդ գծերի խախտման պարագայում Միացյալ Նահանգները կձեռնարկի համարժեք քայլեր (զեկույցն այդ գծերը նախ և առաջ տեսնում է Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում՝ այդ թվում Ուկրաինայի ու Վրաստանի պարագաներում),
- միևնույն ժամանակ, զեկույցն առաջարկում է «ՆԱՏՕ-Ռուսաստան» համագործակցության ձևաչափի փոխարեն Մոսկվային առաջարկել փոխգործակցության նոր շրջանակ, որը կհետաքրքրի Ռուսաստանին, ինչպես նաև խոչընդոտներ չհարուցել Եվրոպայում ռուսական առաջին հերթին էներգետիկ ընկերությունների ներդրումների առջև<sup>1</sup>: Զեկույցն անուղղակի առաջարկում է զիջումների գնալ Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական առաջնորդների անձնական շահերի ոլորտում՝ միևնույն ժամանակ առաջարկելով ԱՄՆ կառավարությանը կոշտ մոտեցում որդեգրել, եթե Ռուսաստանում կամ հետխորհրդային այլ երկրներում ռոնահարվեն ամերիկյան ընկերությունների շահերը:

### ***Հետևություններ***

Թեև զեկույցում նշված չէ, բայց Փոլ Սանդերսի հեղինակած աշխատանքն առաջին հերթին արտահայտում է ամերիկա-բրիտանական քաղաքական ու փորձագիտական շրջանակների կողմից արդեն ձևակերպման մակարդակի հասցված անհանգստությունը՝ կապված ռուս-գերմանական, ըստ էության, ռազմավարական տարրեր պարունակող փոխգործակցության վերաբերյալ: Պատահական չէ, որ խոսելով Ռուսաստանից եվրոպական երկրների

<sup>1</sup> Զեկույցը քիչ հավանական է համարում, որ Եվրոպայում ռուսական ներդրումները վտանգեն ամերիկյան շահերը և ներկայացնում է բավական ուշագրավ մի թիվ՝ 2005թ. ընթացքում ռուսական ուղղակի ներդրումներն արտերկրում 20 անգամ են զիջել ամերիկյանին ու 10 անգամ՝ բրիտանականին:

էներգետիկ կախվածության մասին՝ հեղինակը հարկ է համարում առանձնացնել հատկապես Գերմանիան<sup>1</sup>:

Սակայն ռուս-գերմանական փոխգործակցությունն առաջին հերթին դիտարկվում է ՆԱՏՕ-ի համատեքստում: Նման համագործակցությունը թուլացնում է միասնությունը Հյուսիսատլանտյան դաշինքի ներսում, ինչն էլ ուղղակի սպառնալիք է Եվրոպայում ԱՄՆ շահերի համար: Վաշինգտոնում արդարացիորեն գտնում են, որ ՆԱՏՕ-ի դեգրադացիան կհանգեցնի զլորյալ հարթությունում ԱՄՆ դիրքերի թուլացմանը, և բացի այդ, էապես կաճի եվրոպական ազդեցիկ երկրների (առաջին հերթին՝ Գերմանիայի ու Ֆրանսիայի) ռազմաքաղաքական ինքնուրույնությունը, ինչը նույնպես դեմ է ԱՄՆ շահերին:

Պետք է ասել, որ այդ առումով Վաշինգտոնում ճիշտ են ֆիքսել առկա դինամիկան: Այդ թվում ռուս-գերմանական համագործակցության արդյունքում ՆԱՏՕ շրջանակներում ի հայտ եկած ամերիկա-գերմանական տարաձայնությունները դրա վկայությունն են: Օրինակ, հայտնի է, որ ՆԱՏՕ վերջին՝ ապրիլի 2-4-ը Բուխարեստում կայացած գագաթաժողովի ընթացքում հենց Գերմանիան էր առաջնորդում Ուկրաինայի և Վրաստանի հարցերում ԱՄՆ-ին դեմ դուրս եկած դաշինքի անդամ երկրներին:

*Սարգիս Հարությունյան  
«Նորավանք» հիմնադրամ*

---

<sup>1</sup> Ըստ զեկույցի, այսօր ռուսական բնական գազի չափաբաժինը գերմանական ներմուծման մեջ կազմում է 43%, բացի այդ, Գերմանիան ներմուծում է նավթի 90%-ը, որի մեջ նույնպես ռուսական մասը կազմում է գերակշիռ մասը (թիվը նշված չէ):

## РЫЧАГ ВЛИЯНИЯ В ВИДЕ ГАЗОВОГО ВЕНТИЛЯ: КРИТИКА ЗАПАДА И АКТИВНОСТЬ РОССИИ

Сфера межгосударственных поставок такого важнейшего энергоресурса современности, каковым является природный газ, все больше политизируется и рассматривается странами-производителями этого энергоресурса в качестве одного из самых действенных рычагов достижения внешнеполитических целей.

Поставка природного газа – весьма емкое по своей геоэкономической насыщенности понятие, включающее такие необходимые элементы на пути от страны-производителя к конечным потребителям энергоресурса как ценовая политика, строительство трубопроводных магистралей и сопутствующей инфраструктуры на территории третьих стран или инвестиционное проникновение в уже имеющиеся газовые мощности на территории этих стран, диверсификация «газовых предпочтений» страны-производителя и постановка их в прямую или косвенную зависимость от добрососедских отношений со странами, так или иначе вовлечёнными в систему поставки природного газа.

Последние события на европейской арене межгосударственных отношений показали, что поставка природного газа именно в системном, а значит, в более или менее урегулированном качестве по признакам стабильности, транспарентности, равного подхода в отношениях связки «производитель-транзитарий-реципиент (получатель)», во многом отсутствует. Игроки на этом сегменте энергетического поля межгосударственных отношений (прежде всего, страны-производители газа) скорее заинтересованы в несистемном подходе, что придаёт их действиям большую свободу и позволяет диверсифицировать свои «газовые предпочтения» по внешнеполитическим критериям.

Саммит НАТО в Бухаресте (3-4 апреля 2008г.) в очередной раз показал, что разногласия между основной страной-производителем природного газа на европейский рынок – Россией и главными локомотивами Североатлантического альянса по части видения вопроса дальнейшего расширения Альянса на восток и приближения военной инфраструктуры НАТО к непосредственной российской границе носят, как минимум, напряжённый и неразрешимый в ближайшей перспективе характер.

Другого действенного рычага отстаивания своих национальных интересов у России, помимо энергетической «карты» поставок природного газа на рынок европейских стран, на нынешнем этапе нет.

В своих политических средствах влияния на региональном европейском уровне Россия ограничена, и практика показала, что некоторые её попытки правильно сориентировать внешнеполитический курс по отношению к ключевым странам-транзитариям газа на европейский рынок (например, поддержка правительства В.Януковича в Украине) подвержены большой «политической текучести» (в той же Украине правительство В.Януковича сменил кабинет министров во главе с Ю.Тимошенко, одной из главных лоббистов «обходящих» Россию энергетических маршрутов).

Меры военного характера, которые были упомянуты представителями российских властей<sup>1</sup>, скорее следует рассматривать под призмой укрепления своих рубежей, вписывающихся в

---

<sup>1</sup> Начальник Генерального штаба России Ю.Балуевский 11 апреля 2008г. заявил, что возможное вступление Украины и Грузии в НАТО вынудит Россию предпринять ответные меры для обеспечения своей безопасности: «Однозначно, Россия предпримет действия, направленные на обеспечение своих интересов вблизи своих границ. Это будут не только меры военного характера, это будут и иные меры». (ИА «Интерфакс», 11.04.2008).



объявленный официальной Москвой мораторий на действие для неё положений Договора об обычных вооружённых силах в Европе.

В «наступательном», а не в «оборонительном» плане может быть использован один рычаг, не отягощенный прямой силовой составляющей и находящийся в рамках международно-правовых норм, – поставка природного газа в Европу<sup>1</sup>.

Нынешняя администрация Белого дома прекрасно осознаёт наличие такого рычага у России, и иницилируемая ею политика по диверсификации газовых поставок в Европу в обход России вынуждает последнюю также применять диверсифицированный подход: «дружественность в политике – благоприятные условия поставок газа».

Либерализация внешнего рынка поставок газа, объявленная в качестве принципиального подхода России и означающая равный экономический подход ко всем странам-реципиентам энергоресурса, на данный момент представляется отдалённой перспективой, что обусловлено хотя бы тем, что зачастую на пути от дружественных стране-производителю странам-реципиентам стоят недружественные для первой или второй страны-транзитари.

Одним из последних докладов нынешнего положения дел на рынке газовых поставок в Европу из России под углом зрения «неприемлемости» сохранения газовой зависимости первой от второй стала работа эксперта одного из самых авторитетных аналитических институтов США – Центра стратегических и международных исследований в Вашингтоне (*Center for Strategic and International Studies*) – К.Смит (*Keith C. Smith*) «Энергетическая политика России и ее вызов для политических деятелей Запада» («*Russian Energy Policy and its Challenge to Western Policy Makers*», March 2008).

Критика доклада затронула: 1) ценовую политику России на рынке поставок газа в Европу. Так, указывается, что российские компании в быстром режиме устанавливают нетранспарентные контакты с центральноазиатскими поставщиками газа из Туркменистана, Казахстана и Узбекистана и вместе с наличием своих монопольных позиций в сфере трубопроводного обеспечения поставок газа из этого региона Россия получает возможность покупать газ по низкой цене, а продавать его европейским потребителям по такой цене, которая позволяет извлекать прибыль, не имеющую себе равных на мировых рынках. В докладе также указывается, что экспортные поставки газа Россией в Европу уже зависят от возможностей «Газпрома» монополизировать и контролировать поставки газа из Туркменистана, Казахстана и Узбекистана<sup>2</sup>; 2) монополистические позиции «Газпрома» на рынке поставок газа в Европу с востока и проводимая этой российской компанией активная политика на европейском рынке по вхождению в

---

<sup>1</sup> Размещённая на интернет-сайте ОАО «Газпром» справка по поставкам природного газа компанией на внешние рынки по данным за 2006 год указывает на её лидирующие позиции, прежде всего, на европейском направлении. Экспорт природного газа «Газпромом» в Центральную и Западную Европу в 2006г. достиг 151,1 млрд м<sup>3</sup> (по сравнению с 147 млрд м<sup>3</sup> в 2005г.). Валютная выручка от экспорта товарного газа возросла на 42,5% и достигла рекордно высокого показателя – \$37,2 млрд. Доля российского газа в потреблении этого энергоносителя в Центральной и Западной Европе в 2006г. достигла 27%, а в его импорте – 35%. (*Справка к конференции «Экспорт газа, диверсификация экспортных маршрутов и поставляемых продуктов»*, <http://www.gazprom.ru/articles/article24145.shtml>, 25.06.2007).

<sup>2</sup> Последние по времени экспертные оценки потенциала энергетического рынка России указывают на необходимость формирования в стране амортизационных механизмов и проведения на нынешнем этапе активной политики для сохранения и развития роли России как глобальной энергетической державы. Так, по мнению заместителя министра природных ресурсов РФ А.Варламова, озвученного им во время проведения в апреле текущего года «круглого стола» на тему «Совершенствование государственной политики в области воспроизводства и использования топливно-энергетических ресурсов» в рамках 6-го Всероссийского энергетического форума, при нынешнем положении дел в геологоразведке газа и угля хватит до 2025г., нефти до 2022г., урана до 2018г. Причина в том, что на протяжении как минимум 15 лет добыча энергоносителей в России превышает прирост разведанных запасов. Крупные и гигантские месторождения практически исчерпаны. В дело идут средние, но и на этом российский ТЭК долго не протянет. Затраты на добычу все выше, на разведку – не достаточны. (*Российский ТЭК «доедает» запасы*, [http://www.energyland.info/interview/2008/04/14/interview\\_36](http://www.energyland.info/interview/2008/04/14/interview_36), 14.04.2008).

газовые активы и мощности некоторых ключевых стран-транзитариев. По этому поводу в докладе указывается на заключение «Газпромом» нетранспарентных соглашений с Австрией, Болгарией, Венгрией, Словакией. Особенно подчёркивается, что эти соглашения должны быть проанализированы НАТО более скрупулезно, с точки зрения возможного осложнения ими обеспечения европейской безопасности; 3) стратегию газовой политики России, одна из составляющих которой для автора доклада заключается в том, что Москва резко повышает цены для слабых соседних государств в надежде на повышение долговых обязательств последних и вытекающей отсюда их подверженности допуску на свой внутренний рынок российских компаний. Доклад приводит в этом контексте пример Армении, Беларуси, Молдовы и говорит о подобной «угрозе» и для Украины.

Позиция официальной Москвы в вопросе возможного вступления Украины и Грузии в НАТО категорична: «Мы будем делать всё, чтобы не допустить принятия Украины и Грузии в НАТО и не допустить неизбежно связанного с возможным принятием резкого ухудшения наших отношений и с Альянсом, и с ведущими его членами, и с нашими соседями», – заявил 8 апреля 2008г. министр иностранных дел России С.Лавров (ИА «Интерфакс», 8.04.2008).

На совместной пресс-конференции министров иностранных дел России и Украины в Москве 15 апреля 2008г. глава внешнеполитического ведомства РФ С.Лавров отметил, что у России «есть своя оценка того, как выстраивать отношения на евроатлантическом пространстве, как их выстраивать таким образом, чтобы для всех без исключения расположенных здесь стран создавать равную безопасность и не стремиться обеспечивать безопасность кого бы то ни было за счет безопасности других»<sup>1</sup>.

Думается, в вопросе вхождения Украины и Грузии в НАТО одну из определяющих ролей будет играть «газовая дипломатия», затрагивающая интересы и третьих стран, в нашем случае – Армению.

Политическому руководству страны предстоит найти ту оптимальную позицию, которая бы сумела сохранить и развивать конструктивный диалог с Североатлантическим альянсом и ключевыми странами этой организации, странами-кандидатами в НАТО и одновременно ближайшими соседями Армении, через которые на ее территорию осуществляются критически важные поставки энергоресурсов, и при этом продолжить курс на развитие особо тесных отношений стратегического сотруничества с Россией.

*Михаил Агаджанян*

---

<sup>1</sup> Стенограмма выступления и ответов на вопросы СМИ Министра иностранных дел России С.В.Лаврова на совместной пресс-конференции с Министром иностранных дел Украины В.С.Огрызко, Москва, 15 апреля 2008 года, [http://www.mid.ru/brp\\_4.nsf/0/8D5DB9473C6C7A7CC325742C0053DE92](http://www.mid.ru/brp_4.nsf/0/8D5DB9473C6C7A7CC325742C0053DE92).

## ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՍԱՄՍՈՒՆ-ՁԵՅՅԱՆ ՆԱՎԹԱՄՈՒՂԸ

1994թ. հունվարին Նովոռոսիյսկից եկող «Նասիա» հեղուկանավի վթարից հետո Թուրքիան ընդունեց միակողմանի փաստաթուղթ, ուր մտցվեցին մի շարք նորամուծություններ.

1. 200 մետրից ավելի երկարություն ունեցող նավերը պետք է նեղուցներն անցնեն օրվա ցերեկային ժամերին, և դա անպայմանորեն իրականացվելու է թուրքական լոցմանով (նավատար): Այս նորամուծությունը հիմնականում վերաբերում է հեղուկանավերին ու Սնծովյան նավատորմի ռազմանավերին:
2. Այսուհետ թուրքական իշխանությունները կփորձեն անցկացնել առևտրական նավերի, առաջին հերթին հեղուկանավերի ստուգում՝ պատճառաբանելով ազգային և միջազգային շահագործական-էկոլոգիական ստանդարտների կիրառմամբ:
3. Այդ ստանդարտները չպահպանելու դեպքում կկիրառվեն տուգանքներ և այլ պատժամիջոցներ՝ ընդհուպ մինչև նավը հետ ուղարկելը, նեղուցներին կից նավահանգիստներում կանգառի (լիցքավորման) սահմանափակումը և այլն:
4. Խնդրահարույց նավերի ու բեռների համար լոցմանական ծառայության և նավահանգստային կանգառի արժեքն ավելացավ մի քանի անգամ:

Փաստաթուղթն ուժի մեջ մտավ 1994թ. հուլիսի 1-ից: Նույն թվականի մայիսին Միջազգային ծովային կազմակերպությունը (ՄՕԿ), որը ստեղծվել էր սկզբնական շրջանում նավարկության կարգավորման համար և հետո իր իրավասությունը տարածել նավարկելի ջրանցքների ու նավարկության բնապահպանական խնդիրների վրա, արձագանքեց թուրքական նախաձեռնությանը: Չնայած ՄՕԿ-ն մեղմացրեց թուրքական «Նավարկության կարգավորումը» փաստաթղթի կետերի մեծամասնությունը (հանեց տուգանքներն ու պատիժները), բայց դրա հետ մեկտեղ ներառեց մի շարք «թուրքական» դրույթներ: Դա գլխավորապես վերաբերում է նեղուցների անցման պահանջները չբավարարող նավերի մուտքի դադարեցմանն ու խոչընդոտմանը: Ներկայումս նեղուցներով անցնող նավերի միայն 40 տոկոսն է օգտվում թուրքական լոցմանների ծառայություններից: Ընդ որում, պատահարների մեծամասնությունը տեղի է ունենում այն նավերի հետ, որոնք չեն օգտվում թուրքական լոցմանների ծառայություններից:

Թուրքիայի այս քայլը տեղի ունեցավ առանց Մոնտրեի կոնվենցիան ստորագրած երկրների մասնակցության: Մյուս կողմից՝ այսօր Մոնտրեի կոնվենցիան և նրա մասնակիցների կազմը համարժեք չեն նրա ընդունումից մոտ 70 տարի անց առաջացած իրադրությանը:

1994թ. նավարկության մեջ Թուրքիայի կողմից նոր կանոնների հաստատումը նոր ցնցումներ առաջացրեց ռուս-թուրքական հարաբերություններում և սկիզբ դրեց «նեղուցային» հակամարտությանը: Ռուսաստանը մի շարք բողոքի նոտաներ հղեց, ռուսական ՋԼՄ-ում քննադատական հոդվածների հեղեղ թափվեց Թուրքիայի հասցեին, Ռուսաստանը նույնիսկ սպառնաց Թուրքիային գազ չմատակարարել: Ռուսական հաշվարկներով՝ դրան հաջորդող 7 տարիների ընթացքում Ռուսաստանը կորցրել է 100 միլիարդ դոլար:

Ռուսաստանում թուրքական այս քայլը պատճառաբանվեց հետևյալ կերպ.

1. Սա Թուրքիայի արձագանքն էր հաջողությամբ շահագործման հանձնված Թենզիզ-Նովոռոսիյսկ նավթամուղին (ԲԹՁ-ի փոխարեն):
2. Կասպյան տարածաշրջանի երկրների (առաջին հերթին Ղազախստանի) և նավթային ընկերությունների վրա ճնշում գործադրելու միջոց՝ ԲԹՁ նախագիծը կյանքի կոչելու համար:

1997թ. դեկտեմբերին բարձրացվեց օտարերկրյա նավերի նեղուցներով անցնելու մաքսատուրքը, իսկ գերհեղուկանավերը նեղուցներով անցնելուց 48 ժամ առաջ անպայման պետք

է տեղյակ պահեին թուրքական իշխանություններին: Հաջորդ տարի յուրաքանչյուր տոննաժ ունեցող հեղուկանավ հավասարվեց վտանգավոր բեռ փոխադրող նավերին, իսկ դրանց անցումը գիշերային ժամերին արգելվեց: Դա ԵՄ երկրների նավթաթորման գործարաններում ճգնաժամային իրավիճակ առաջացրեց: 2000թ. հուլիսին արգելվեց այն նավերի անցումը նեղուցներով, որոնց երկարությունը գերազանցում էր 304 մետրը:

Նեղուցներով նավարկության սահմանափակումը չի վերաբերում միայն հեղուկանավերին: 1997թ. աշնանը, երբ Ռուսաստանը փորձեց Կիպրոս փոխադրել C-300 զենիթային համալիրները, որոնք ունակ էին այդտեղից հարվածել Թուրքիային, Անկարան ակնհայտ զայրույթով սկսեց ստուգել ռուսական նավահանգիստներից եկող յուրաքանչյուր քիչ թե շատ խոշոր առևտրական նավ: Ընդ որում, դրանք միայն ռուսական նավեր չէին. դրանց մեջ կային Կիպրոսի, Ուկրաինայի, Եգիպտոսի, Էկվադորի և նույնիսկ Գվինեայի դրոշները կրող նավեր: Այդ ժամանակ թուրքական իշխանությունները մեղադրվեցին ծովային իրավունքի խախտման մեջ, ինչին ի պատասխամ նրանք ասացին, որ ազգային անվտանգության ապահովումը մշտապես չի կարելի համաձայնեցնել ծովային իրավունքի նորմերի հետ:

2000թ. Թուրքիան սկսեց ներդնել նավերի ղեկավարման ժամանակակից համակարգը, որը մշակվել էր ամերիկյան «Lockheed Martin» ընկերության կողմից: 2001թ. հուլիսին պլանավորված էր շահագործման հանձնել նավերի շարժման ռադարային վերահսկողության համակարգը, սակայն դա տեղի չունեցավ շինարարական աշխատանքների գրաֆիկների խախտման պատճառով: Լլոյդի ծովագնացության անվտանգության տեխնոլոգիայի բաժնի հետազոտությունների համաձայն՝ ռադարային վերահսկողության համակարգը կրկնակի կավելացնի նեղուցների թողունակությունը՝ հասցնելով մինչև 145 միլիոն տոննայի: Սակայն դա թերահավատների մեջ կասկած է հարուցում հետևյալ պատճառներով.

1. Տվյալ համակարգի գլխավոր առաջադրանքը համարվում է ծովագնացության անվտանգության բարելավումը:
2. Փոխադրվող նավթի ու նավթամթերքի ծավալի ավելացումն անհրաժեշտ է դիտարկել այլ բեռների փոխադրման աճի հետ մեկտեղ (Լլոյդի հետազոտություններում շեշտը դրվել էր հեղուկանավերի վրա, որոնց բաժինն ընդհանուր նավարկության մեջ կազմում է 12 տոկոս, և դա կնվազի դրանց դեղվեյթի աճի հաշվին):
3. Նեղուցներով անցնող ոչ բոլոր նավերն են հազեցած ժամանակակից նավիգացիոն սարքավորումներով: Դա առաջին հերթին վերաբերում է ԱՊՀ երկրների նավերին:
4. Նեղուցներում անվթար աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ են բարձրակարգ մասնագետներ ոչ միայն նավերի վրա (այդ թվում նաև լոցմաններ), այլև՝ առափնյա նավիգացիոն կայաններում: Նման մասնագետների թիվն առայժմ բավարար չէ:

Դրա համար էլ չպետք է ակնկալել նավթի փոխադրման կրկնակի ավելացում: Առավելագույնը դա կհասցվի մինչև 100-110 միլիոն տոննայի:

2002թ. հոկտեմբերին Թուրքիան բնապահպանական անվտանգության ապահովման պատրվակով կոշտացրեց նեղուցներով անցնող հեղուկանավերի անցման կանոնները: Թուրքիան չի թույլատրում Բոսֆորը վերածել նավթի անցուղու: Թուրքիային աջակցում են «Գրինփիս» և հարյուրավոր այլ հասարակական կազմակերպություններ:

2004թ. դեկտեմբերին Մոսկվան Անկարայի հետ բանակցությունների ժամանակ բարձրացրեց «Թուրքական նեղուցներով առևտրային նավարկության մասին» միջկառավարական համաձայնագիր ստորագրելու հարցը: Սակայն կողմերին չհաջողվեց հարթել տարաձայնությունները: Թուրքիան հրաժարվեց ռուսական առաջարկից, համաձայն որի՝ նավթով բեռնված հեղուկանավերի անցման ռեժիմի վրա թուրքական կողմի դրած սահմանափակումները պետք է չեղյալ հայտարարվեին: 2005թ. հունվարին Մոսկվա այցելեց թուրքական կառավարության ղեկավար Էրդողանը: Հարցը, սակայն, մնաց չլուծված: Այսպիսով, նեղուցների ինդիքն այսօր էլ Ռուսաստանի համար չի կորցրել այժմեականությունը:

Բրետան թերակղզու մոտ նավթամթերքով լի «Էրիկա» հեղուկանավի վթարից հետո Եվրահանձնաժողովն իր հերթին մի շարք նորամուծություններ կիրառեց.

1. 2005թ. սկզբից արգելվում է ԵՄ երկրների ջրերում 23 տարի գործող մեկկորպուսանի հեղուկանավերի (առանց բալաստային պաշտպանության) շահագործումը:
2. 2010-ից արգելվելու է ԵՄ երկրների ջրերում 28 տարի գործող մեկկորպուսանի հեղուկանավերի (բալաստային պաշտպանությամբ) շահագործումը:
3. Աճում է նյութական պատասխանատվությունը և վնասի փոխհատուցումը՝ նավթով ու նավթամթերքով ծովի ու ծովափի աղտոտման պարագայում:

ԵՄ նորամուծությունները Թուրքիայի համար նեղուցների հարցում նոր հեռանկարներ բացեցին: Այլ կերպ ասած՝ նորամուծությունների հետևանքով հեղուկանավերը պետք է դառնան երկկորպուսանի: Սև ծովում գործող ռուսական հեղուկանավերը փոքր տոննաժ ունեցող լցանավեր են և, բնականաբար, միակորպուսանի են: Հեղուկանավային նավատորմը միակորպուսանիից երկկորպուսանիի վերածելու գործընթացը բավական երկարատև է: Երկկորպուսանի հեղուկանավերի նախաձեռնությունը պատկանում է ԱՄՆ-ին, որը 1990թ. «Նավթով ջրատարածության աղտոտման մասին» օրենք ընդունեց: Կախված հեղուկանավի դեզվեյթից և մի շարք առանձնահատկությունից՝ 2010թ. սկսած (կամ 2015թ. սկսած) ԱՄՆ ջրատարածությունում կարող են գտնվել միայն երկկորպուսանի հեղուկանավեր, միակորպուսանի հեղուկանավերը շահագործումից պետք է հանվեն նորմատիվ ծառայության ժամկետի ավարտից հետո (25 տարի):

Վերջին 50 տարիների ընթացքում նեղուցների գոտում տեղի է ունեցել համարյա 500 արտակարգ պատահար, որոնցից 40-ը՝ լուրջ: Միայն 1983-1997թթ. տեղի է ունեցել 167 խոշոր վթար: Դրանք չեն վերաբերում միայն հեղուկանավերին. յուրաքանչյուր խոշոր նավ, որն ամբողջությամբ լիցքավորված է վառելիքով, համարյա նույնպիսի վտանգ է ներկայացնում տարածաշրջանի բնապահպանությանը: Վթարների ու ծով թափված նավթի բռնկման պարագայում նույնիսկ նեղուցների նավարկության կարճաժամկետ դադարեցումն առաջացնում են վիրթիսարի տնտեսական կորուստներ տարածաշրջանի բոլոր երկրների համար: Չպետք է մոռանալ, որ նեղուցները Սև ծովից դեպի Համաշխարհային օվկիանոս միակ դարպասներն են համարվում Ուկրաինայի, Բուլղարիայի, Ռումինիայի ու Վրաստանի համար, ինչպես նաև կարևորագույն տրանսպորտային երթուղի Ռուսաստանի ու Թուրքիայի համար:

Բոսֆորում յուրաքանչյուր խոշոր վթարի դեպքում նեղուցները մյուս երկրների նավերի առջև փակվում են 60-90 օրով: Դրա պատճառով հսկայական ֆինանսական կորուստներ է կրում ոչ միայն այն ընկերությունը, որին պատկանել է տվյալ հեղուկանավը, այլև գործընթացի մնացած բոլոր մասնակիցները, այս դեպքում արդեն խոսքը տասնյակ, եթե ոչ հարյուրավոր միլիոն դոլարների մասին է:

Ստամբուլի 12 միլիոնանոց բնակչությունն անընդհատ ապրում է աղետի սպասումով: Հերթական աղետը պարզապես ժամանակի հարց է: 2002թ. նեղուցներով անցել է 47283 նավ, որոնցից 6022-ը փոխադրել են նավթ, նավթամթերք և քիմիական նյութեր: Քանի որ նեղուցներն ունեն միջազգային ջրերի կարգավիճակ, Թուրքիան նեղուցներով անցնող նավերի անվտանգության հարցում չի կարողանում կոշտ ստանդարտներ կիրառել: Թուրքիան նեղուցներով անցնող նավերին ստիպում է վերցնել լցման ու քարշիչ, իսկ մնացածն արդեն իրենից կախված չէ: Մոնտրեի կոնվենցիայի համաձայն՝ լցմանը պարտադիր չէ: Բոսֆորի նեղուցը 12 կտրուկ պտույտ է, դա նշանակում է, որ այն նավարկության համար աշխարհի ամենափոքր վայրերից մեկն է: Որոշ պտույտների վայրերում (օրինակ՝ Քանլըքում) հանդիպակաց նավերը տեսանելի չեն:

Նեղուցում կան 4 հոսանք և բազմաթիվ ջրապտույտներ: Դրան պետք է հավելել քամիները, հատկապես հարավային քամին, որից ամենաշատն են վախենում նավաստիները: Քամին կարող է վերածվել փոթորկի և նույնիսկ փոխել մակերևութային հոսանքի ուղղությունը: 5 հանգույց արագությամբ հոսանքը կարող է վերածվել 7 հանգույցի, ինչը նավի անցումը դարձնում է դժվարդեկավարելի: Նեղուցի երկարությունը 33.4 կմ է, միջին լայնությունը՝ 1400 մ, իսկ նվազագույն լայնությունը՝ 700 մ: Մեծ է հավանականությունը, որ պտույտի դեպքում ուժեղ հոսանքը կարող է հանգեցնել վրիպման և նավը շարտել ափ: Նեղուցը հատում է 2 կամուրջ: Նեղուցով տարեկան անցնում են 45000-50000 նավ, 15000 լաստանավ, որոնք

օրական փոխադրում են 1.5 միլիոն մարդ՝ գումարած հարյուրավոր ձկնորսական նավեր, զբոսանավեր և այլն:

Եթե եղանակային պայմանները շատ վատ են, ապա Թուրքիայի իշխանություններն իրավունք ունեն փակել նեղուցները: Նրանք կարող են այդպես վարվել նեղուցներով մեծ բեռնվածություն ունեցող հեղուկանավ անցնելիս: Այդպիսի հեղուկանավ հանդիսացող AMT Explorer-ի պարագայում նեղուցները փակվել էին 3.5 ժամով:

Սև ծովն աղտոտվելու վտանգի առումով բավական բարձր ռիսկի գործոն է պարունակում: Այստեղ հեղուկանավերի վթարները կարող են հանգեցնել տարածաշրջանային մասշտաբով բնապահպանական աղետի:

ՄԱԿ Բնապահպանական ծրագրի գնահատմամբ՝ մարդկությունը 2001թ. օրական ծախսում էր 75 մլն բարել նավթ և 220 մլրդ մ<sup>3</sup> գազ: Կանխատեսվում է, որ նույնիսկ տնտեսական աճի ոչ զգալի տեմպերի դեպքում 2010թ. նավթի համաշխարհային պահանջարկը կաճի 20, իսկ գազինը՝ 27 տոկոսով:

Ներկայումս Ռուսաստանը մտադիր է վերամշակել եվրոպական երկրների մշակած միջուկային վառելիքը: Մա մտահոգում է թուրքերին, քանի որ, ըստ նրանց, դրա փոխադրումը դեպի Ռուսաստան կարող է տեղի ունենալ ամենակարճ ճանապարհով՝ սևծովյան նեղուցների միջով դեպի Նովոռոսիյսկ: Թուրքական և՛ պետական, և՛ հասարակական կազմակերպություններն աջակցում են իրենց կառավարությանը և լի են վճռականությամբ՝ ոչ մի դեպքում չթույլատրել վտանգավոր բեռի անցումը նեղուցներով: Այս հարցում նրանց աջակցում են ռուս բնապահպանները:

Թուրք փորձագետների տվյալներով՝ նեղուցների տարեկան թողունակությունը կազմում է 80-82 մլն տ նավթ և նավթամթերք: 2000թ. նեղուցներով անցել է համարյա 49.000 նավ (երկու ուղղությամբ), որոնցից համարյա 5000-ը նավթով բեռնված հեղուկանավեր են եղել: Փոխադրված նավթի ու նավթամթերքի ծավալը գերազանցել է 75 մլն տ սահմանագիծը: Թուրքական նեղուցներով անցնող շարժման ինտենսիվությունը 4 անգամ գերազանցել է Պանամայի և 3 անգամ Մուեզի ջրանցքներին:

Թուրքիան մտադիր է վերափոխել նեղուցների միջազգային կարգավիճակը: Մինչև 1998թ. թուրքական իշխանությունները պաշտոնապես նեղուցներն անվանում էին «սևծովյան»: Բոլոր փաստաթղթերում օգտագործվում էին «Բոսֆոր» և «Դարդանել» աշխարհագրական անվանումները, ինչը յուրօրինակ կերպով հաստատում էր նեղուցների կարգավիճակի «ոչ ազգային» լինելը: Մակայն 1998թ. նավարկության կարգում նեղուցներն անվանվեցին «թուրքական» և համարվեցին Ստամբուլ և Չանաքքալե (Դարդանել) քաղաքների նավահանգստային ջրեր:

Նեղուցներում առաջացած խցանումների պատճառով նավթային ընկերությունները ստիպված էին լինում վճարել տուգանքներ՝ նավթը ժամանակին տեղ չհասցնելու համար: Այդ գործընթացը գազաթնակետին հասավ 2006թ., ինչը լցրեց բոլորի համբերության բաժակը և ստիպեց շահագրգիռ երկրների կառավարություններին ձեռնամուխ լինել տվյալ խնդրի լուծմանը: Պետք է նշել, որ խցանումների պատճառով տվյալ նավթային ընկերությունների կրած կորուստները կազմում են տարեկան 700-750 մլն դոլար: Դրանց մեծ մասը բաժին է ընկնում ձմռան 3 ամիսներին. նավթի յուրաքանչյուր տոննան նստում էր \$12-13-ից ավելի:

Վերջին 10 տարիների ընթացքում Բոսֆոր ու Դարդանել նեղուցներով տարեկան անցնող հեղուկանավերի թիվը 4000-ից աճել է մինչև 11.000-ի, այսինքն՝ օրական երեսուն հեղուկանավ: Այս փաստը կարելի է գնահատել որպես «մոտիկից գնացող փողեր», ինչի պատճառով էլ Թուրքիան, սեփական եկամուտների մասին մտածելով, ցանկանում է տարանցումը նեղուցներից փոխադրել խողովակաշարեր:

Նեղուցների ծանրաբեռնվածության նվազեցման ուղղությամբ առաջին քայլը ԲԹՁ-ն էր, որը շահագործման հանձնվեց 2006թ. հուլիսի 13-ին: Դրա շնորհիվ Կասպյան նավթի մի մասը շեղվեց Բաքու-Նովոռոսիյսկ երթուղուց: Երկրորդ քայլը պետք է հանդիսանար Թուրքիայի եվրոպական հատվածում կառուցվելիք Քըլըքոյ-Իբրիքբաբա խողովակաշարը, որի երկարությունը կազմելու էր 193 կմ, արժեքը՝ 913 մլն դոլար, թողունակությունը՝ տարեկան 60 մլն տոննա: Քըլըքոյ տերմինալում նախատեսված էր կառուցել 4 նավամատույց՝ միաժամանակ

150.000 տ դեղվեյթով 3 հեղուկանավի լիցքավորման համար: Իբրիքիաբայի տերմինալում նախատեսված էր կառուցել 2 նավամատուց՝ միաժամանակ 300.000 տ դեղվեյթով 2 գերհեղուկանավի լիցքավորման համար: Սակայն այս ծրագիրը չիրականացվեց և կորցրեց այժմեականությունը Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս նավթամուղի նախագծի հաստատումից հետո:

Ոչ վաղ անցյալում Թուրքիայի կառավարությունը հավանություն տվեց երկրի եվրոպական հատվածում 140 կմ նավարկելի ջրանցքի կառուցման նախագծին: Այն պետք է անցներ նեղուցներին զուգահեռ: Նախագիծը գնահատվում էր 300-320 մլն դոլար: Տվյալ տարածքում մինչքրիստոնեական ժամանակաշրջանում կառուցված համանման ջրանցքը պետք է փակվեր բնապահպանական նկատառումներով: Ի տարբերություն նեղուցների, որոնք համարվում են միջազգային ջրեր, ջրանցքը կգտնվի բացառապես Թուրքիայի իրավասության ներքո: Այս նախագիծը հազիվ թե իրականացվի մոտ ապագայում:

Դեռևս 1940-ական թթ. վերջերին և 1950-ական թթ. սկզբներին ամերիկյան ընկերությունները պլանավորել էին կառուցել Սամսուն-Ջեյհան նավթամուղը: 1970-ական թթ. վերջերին համանման նախագիծ էին մշակել Թուրքիան և Ռումինիան՝ ռումինական, ալբանական, մերձավորարևելյան ու հյուսիսաֆրիկյան նավթի փոխադրման համար: Սակայն Մոսկվան մեծ ճնշում գործադրեց Բուխարեստի վրա, ինչի արդյունքում էլ կողմերը բավարարվեցին անդրսևծովյան Սամսուն-Կոնստանցիա համալիրով՝ կրճատելով դանության տարանցումը ԽՍՀՄ-ի միջով:

Սև և Միջերկրական ծովերի միջև անցկացվող Սամսուն-Ջեյհան նոր խողովակաշարի կառուցումը սկսվեց 2007թ. մայիսի կեսերին: Պաշտոնապես այն ստացավ «Անդրանատոլիական խողովակաշարային նախագիծ» (*Trans Anadolu Petrol Boru Hattı` TAPCO*) անվանումը: Նախագծի նախաձեռնողներն են թուրքական *Celik Enerji*, իտալական *Eni*, հնդկական *Indian Oil Corporation Ltd. (IOCL)* ընկերությունները: Խողովակաշարը պետք է խաչաձևորեն փոխադրեր ԱՊՀ-ից Կասպյան և հարավից դեպի Եվրոպա (Կոնստանցիա՝ Ռումինիա) և նախկին խորհրդային հանրապետություններ (Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան) հյուսիսաֆրիկյան ու արաբական էներգակիրները:

Նավթամուղի հիմնարկեքի արարողակարգին ներկա էին Իտալիայի տնտեսական զարգացման նախարար Պիեռլուիջի Բերսանին և Թուրքիայի էներգետիկայի նախարար Հիլմի Գյուլերը:

Սամսուն-Ջեյհան նավթամուղի երկարությունը 555 կմ է, այն արժենալու է 1-1.5 մլրդ դոլար, նախագծային հզորությունը՝ օրական 1 մլն բարել (տարեկան 50 մլն) տ: Հնարավորություն կա հետագայում այդ թվաքանակը հասցնել մինչև օրական 1.5 մլն բարելի (տարեկան 70 մլն տոննայի): Նախագիծը նախատեսվում է շահագործման հանձնել 2010թ.: Դա համընկնում է Քաշադանի<sup>1</sup> նավթահանքի շահագործման ժամկետին:

Արևմուտքը որոշել է կենտրոնացնել նոր նավթային երթուղու ստեղծման ջանքերը, որը կմրցակցի ռուսական նավթային երթուղիների հետ: Դա շատ կարևոր է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արևմուտքը Ռուսաստանին զիջում է գազի փոխադրման մրցակցությունում: Իր հերթին Թուրքիան նույնպես հետաքրքրված չէ Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս նավթամուղով: Դրա համար էլ նրա համար օգտակար է իր տարածքով նոր նավթամուղի կառուցումը:

Անդրանատոլիական նավթամուղը լուծում է 2 խնդիր.

1. Կավելանա Թուրքիայի տարածքով Կասպյան նավթի փոխադրումը՝ դրանով իսկ մեծ վնաս հասցնելով Նովոռոսիյսկ-Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս խողովակաշարին ու Կասպյան նավթը շեղելով այդ երթուղուց:
2. Նավթամուղը նախատեսված է ռուսական էներգակիրների նկատմամբ ուկրաինական, մոլդովական և վրացական տարածքներում արհեստական մրցակցություն ստեղծելու համար: Ցայժմ այդ երկրների նավթային մատակարարումը մենատիրաբար իրականացնում էր Ռուսաստանը: ՎՈՒԱՄ երկրներ մտնող նավթի գինը պետք է որոշեն ԱՄՆ-ը և Եվրամիությունը:

<sup>1</sup> Ներկայումս «Քաշադան-Աքտաու-Բաքու» 800 կմ նավթամուղի հարցը քննարկման փուլում է:

Առաջինը *TAPCO* նախագծի մասին խոսեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան<sup>1</sup> խողովակաշարի բացման արարողակարգի ժամանակ: Նա հայտարարեց, որ Սամսուն-Ջեյհան զարկերակը կարող է ընդունել ռուսական, ադրբեջանական ու դազախական նավթը: Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության՝ Ռուսաստանի, Անդրկովկասի ու Միջին Ասիայի դեպարտամենտը թուրքական ու արտասահմանյան լրատվամիջոցներին հայտարարեց, որ Թուրքիան հրավիրում է բոլոր այն երկրներին, որոնք հնարավորություն ունեն այդ խողովակաշարով նավթ փոխադրել: Այդ երկրներից են առաջին հերթին Ռուսաստանը և Ղազախստանը:

Այսպիսով, *TAPCO*-ն կարող է տեսականորեն փոխադրել նաև ռուսական նավթը, այդ թվում նաև Նովոռոսիյսկից: Սակայն ամենայն հավանականությամբ վրացական Բաթում և Փոթի նավահանգիստներից Սամսուն կհասնի Կասպյան նավթը: Այն վերոնշյալ նավահանգիստներ է հասցվում խողովակաշարերի<sup>2</sup> միջոցով:

Պետք է նշել, որ Սամսուն-Ջեյհան խողովակաշարն անվտանգության տեսանկյունից մեծ առավելություն ունի ԲԹՋ-ի նկատմամբ, քանի որ շրջանցում է քուրդ ապստամբների գործողության տարածքները: Նավթամուղը միմյանց կկապի Թուրքիայի սևծովյան ու միջերկրածովյան հատվածները: Նաև դա է Սամսուն-Ջեյհան խողովակաշարի առավելությունը, քանի որ այն անցնում է ոչ թե մի քանի, այլ մեկ երկրի միջով:

Ներկայումս թուրքական իշխանությունները վստահ են եվրասիական շատ էներգաերթուղիների՝ Թուրքիայի միջոցով անցնելու այլընտրանք չունենալու մեջ: Թուրքիայի՝ նավթափոխադրման հեռանկարային եկամուտները կազմելու են տարեկան 350 մլն դոլար՝ ներկայիս 100-120 մլն-ի փոխարեն: Բացառված չէ, որ *TAPCO*-ի կոնստրուկցիոնի ներկայիս կազմը շատ շուտով կհամարվի ամերիկյան ու բրիտանական ընկերություններով: Հնարավոր է, որ առաջարկներ լինեն նաև Ռուսաստանից: Կոնստրուկցիոնը պատրաստ է նոր նավթամուղի մշտական գնորդների համար նվազեցնել տարանցման սակագները:

Սամսուն-Ջեյհան նավթամուղը կարող է մեծ հարված հասցնել Հունաստանին ու Բուլղարիային, որոնք Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղի շնորհիվ հայտնվել են աշխարհի էներգետիկ քարտեզի վրա: Միաժամանակ, Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղը, Սամսուն-Ջեյհան նավթամուղի համեմատ, համարյա երկու անգամ կարճ է և մոտ կես մլրդ դոլարով էժան:

Հատկանշական է, որ Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս և Սամսուն-Ջեյհան նավթամուղների կառուցումից առաջին հերթին կօգտվի Ղազախստանը: Աստանան խորապես շահագրգռված է սեփական էներգակիրների փոխադրման դիվերսիֆիկացման մեջ: Դրա համար էլ Ղազախստանին, ըստ էության, չի մտահոգում այն հանգամանքը, թե սեփական նավթը որ ուղղությամբ դուրս կգա եվրոպական շուկաներ՝ Բալկաններով, թե՛ Թուրքիայով:

Զնայած թուրքերը Սամսուն-Ջեյհան նավթամուղի կառուցմամբ առայժմ առաջ են անցել ռուսների Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղից, ռուսներին դա քիչ է մտահոգում, քանի որ Սամսուն-Ջեյհան նավթամուղի կառուցմանը մասնակցող ընկերությունները, ի տարբերություն Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղի կառուցմանը մասնակցող ընկերությունների, տարածաշրջանային նավթի մատակարարներ չեն: Եթե վերջին հաշվով Թուրքիային հաջողվի առաջինը շահագործման հանձնել Սամսուն-Ջեյհան նավթամուղը, ապա դա հազիվ թե հետաքրքրի ռուսական ընկերություններին, քանի որ նրանք կձգտեն աշխատել սեփական խողովակաշարերով: Սակայն վճռորոշ կարող են լինել խողովակաշարերի սակագները: Եթե չլիներ ԲԹՋ-ն, ապա կարելի էր վստահորեն ասել, որ Ռուսաստանն անպայման ուրախությամբ կմիանար Սամսուն-Ջեյհան նախագծին: ԲԹՋ-ն ԱՊՀ տարածքում կառուցված առաջին նավթամուղն է, որը շրջանցում է Ռուսաստանի տարածքը:

<sup>1</sup> ԲԹՋ-ով նավթի տարանցումից Թուրքիան տարեկան ստանում է 300 մլն դոլար: Ներկայումս ԲԹՋ-ով օրական փոխադրվում է 875.000 բարել, իսկ տարեվերջին այն պետք է գերազանցի 1 մլն սահմանագիծը: Հետագայում՝ 2010-2012թթ., այդ ցուցանիշը պետք է հասցվի 1.6 մլն բարելի:

<sup>2</sup> 1999թ. շահագործման հանձնվեց 830 կմ երկարություն ունեցող Բաքու-Մուփսա նավթամուղը, որի առավելագույն թողունակությունն օրական կազմում է 115.000 բարել: 20-րդ դարակարգի կառուցված և ներկայումս մոդեռնացված Բաքու-Բաթում խողովակաշարի երկարությունը կազմում է 986 կմ:



Փորձագետների հաշվարկներով՝ Կասպյան տարածաշրջանում նավթի արդյունահանումը 2010թ. կկազմի տարեկան 150 մլն տ: Դրա կեսը կփոխադրվի ԲԹՁ-ով: Մնացածի համար կայաքարեն Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս, Սամսուն-Ջեյհան և Կոնստանցիա-Տրիեստ, Օդեսա-Բրոդի խողովակաշարերը և նեղուցներից օգտվող հեղուկանավերը:

Ներկայումս Եվրոպան տենդագին ձեռնամուխ է եղել էներգակիրների փոխադրման այլընտրանքային ուղիներ գտնելուն: Այս խնդրի լուծման միակ տարբերակը համարվում է թուրքական ուղղությունը: Միջին Ասիայից Եվրոպա նավթի ու գազի փոխադրման միակ ցամաքային ուղին, որը շրջանցում է Ռուսաստանի տարածքը, անցնում է Թուրքիայով: Եվրոպայի կողմից այս ուղղությամբ առաջին քայլը համարվում է ԲԹՁ-ն:

Այս համատեքստում պետք է հիշատակել նաև «Nabucco»<sup>1</sup> գազատարը, որը Թուրքիայի տարածքի միջով պետք է փոխադրի թուրքմենական ու իրանական գազը դեպի Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա: Նախատեսվում է, որ այդ գազատարով տարեկան կփոխադրվի 30 մլրդ մ<sup>3</sup> գազ: Նախագիծը նախատեսված է շահագործման հանձնել 2012թ.:

Խոսակցություններ կան նաև Սամսուն-Ջեյհան գազամուղի անցկացման մասին: Դրա շահագրգիռ կողմերն են ռուսական «Գազպրոմ» և իտալական «Էնի» ընկերությունները: Դրա շնորհիվ ռուսական գազը Թուրքիայի միջոցով կհասցվի Իսրայել, Հունաստան և Իտալիայի հարավ:

Թուրքիան ցանկանում է «Երկնագույն հոսք» գազամուղը Սամսունից հասցնել մինչև Ջեյհան, ինչպես նաև Ջեյհանում կառուցել խոշոր նավթավերամշակման գործարան, Ջեյհանը վերածել թուրքական Ռոտերդամի (այս քաղաքի նավահանգստի բեռնաշրջանառությունը Եվրոպայում ամենամեծն է): Ծրագիրը գնահատվում է 10 մլրդ դոլար: Դրա իրականացման դեպքում միջերկրածովյան նավահանգստից տարեկան կարող է փոխադրվել մինչև 200 մլն տ: Դրանից մոտ 60-70 մլն տ պետք է հասցվի Սամսուն-Ջեյհան նավթամուղով: Չպետք է մոռանալ նաև 600 մղոնանոց Քիրքուք-Ջեյհան նավթամուղի<sup>2</sup> մասին, որը գործում է ընդհատումներով ու բավական քիչ նավթ է փոխադրում: Այսօր ԲԹՁ-ով տարեկան 50 մլն տ նավթ է փոխադրվում: Խողովակաշարն ամբողջովին լիաբեռնելու դեպքում Ջեյհան նավահանգստում օրական կարող է սպասարկվել 1-2 հեղուկանավ: 21 ամսվա ընթացքում ԲԹՁ-ով նավթի տարանցումից Թուրքիան ստացել է 20 մլրդ դոլարի երկամուտ (միջինը 1 բարելը 60 դոլարի հաշվարկով): Մինևույն ժամանակահատվածում 426 հեղուկանավեր լիցքավորվել են 333 մլն բարել նավթով:

Այսպիսով, ներկայումս Թուրքիայի էներգաքաղաքական շահերը չեն սահմանափակվում միայն տարանցիկ երկրի կարգավիճակով: Ջարգացող թուրքական արդյունաբերությունն ինքը էներգակիրների բավական խոշոր պահանջատեր է: Այսօր սեփական կարիքների բավարարման համար Թուրքիան բնական գազի 60 տոկոսը գնում է «Գազպրոմից», դրա համար էլ հազիվ թե ցանկանա ՆԱՏՕ-ի իր գործընկերների շահերի օգտին սրել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Հազիվ թե Թուրքիան վտանգի տակ դնի սեփական էներգետիկ անվտանգությունը՝ պաշտպանելով Եվրոպայի շահերը, որը չի ցանկանում թուրքերին տեսնել Եվրամիության շարքերում:

Իր հերթին Եվրոպան Թուրքիային թույլատրում է որոշակի «ինքնուրույնություններ»: Այս ամենին նպաստում է Ալժիրից Իսպանիա նավթամուղի կառուցման շուրջ առաջացած լարված իրավիճակը: Փաստորեն, Թուրքիան չի ցանկանում կորցնել Եվրոպա էներգակիրներ փոխադրելու մեջ ունեցած իր դերը:

Ներկայումս ԲԹՁ-ն համարվում է Կասպյան ավազանը Միջերկրական ծովին ու Մուեզի ջրանցքին կապող ամենակարճ ուղին: Բնականաբար, Թուրքիան ձգտում է առավելագույն քանակի նավթ ուղղել ոչ թե նեղուցներով, այլ ԲԹՁ-ով: Դրա համար էլ Անկարան ձգտում է ամեն կերպ խոչընդոտել ռուսական ու Կասպյան նավթը սևծովյան նեղուցներով դեպի Միջերկրական փոխադրելուն:

Նեղուցների հարցում Անկարայի սահմանափակումներից տուժում է ոչ միայն Ռուսաստանը, այլև բոլոր սևծովյան երկրները՝ ներառյալ Բուլղարիան ու Հունաստանը: Դրա համար

<sup>1</sup> Գազատարի անվանումն առաջ է եկել բարելոնյան Նաբուգոդոնոսոս արքայի անունից:

<sup>2</sup> Օրական 1.6 մլն բարել նավթ փոխադրելու պոտենցիալ ունեցող նավթամուղը օրական փոխադրում է 300.000 բարել:

Էլ պլանավորված է վերոնշյալ ջրային երթուղին շրջանցող մի շարք նավարկելի ջրանցքների կառուցումը. Դանուբ-Դրավա-Ադրիատիկ ծով (Հունգարիա-Խորվաթիա), Դանուբ-Վարդար-Էգեյան ծով (Սերբիա-Մակեդոնիա-Հունաստան): Կառուցվելու են նաև Ռումինիա-Խորվաթիա-Սլովենիա և Բուլղարիա-Մակեդոնիա-Ալբանիա-Իտալիա նավթամուղները:

Ներկայումս արևմտյան քաղաքական գործիչները ցանկանում են Կոսովոյի սահմանները հասցնել մինչև Բուլղարիա, որպեսզի շրջափակեն Բուրգասից կառուցվող նավթամուղի շարունակությունը Մակեդոնիայի միջով դեպի Սերբիա և Ադրիատիկ ծով:

Աշխարհագրական տեսանկյունից կասպյան հումքը Եվրոպա հասցնելը և միաժամանակ Ռուսաստանի տարածքը շրջանցելը հնարավոր է կա՛մ թուրքական, կա՛մ ուկրաինական տարածքով (նախնականորեն Սև ծովով այն փոխադրելով): Ե՛վ ԱՄՆ-ը, և՛ Եվրամիությունը սկզբնական շրջանում շեշտը դրեցին Կիևի վրա՝ աջակցելով Օդեսա-Բրոդի նավթամուղի կառուցմանը: Հենց այդ խողովակաշարը պետք է դառնար Ադրբեջանից ու Ղազախստանից բերվող Կասպյան նավթի համար «պատուհան դեպի Եվրոպա»:

Մակայն դեռևս նավթամուղի բացման նախօրեին ԵՄ-ը անհանգստացած էր Կասպյան տարածաշրջանում արդյունահանվող հումքի պակասից, քանի որ տարածաշրջանի երկրների նավթարդյունաբերությունն այդ ժամանակ լճացման փուլում էր: Դրա համար էլ որպես լրացուցիչ աղբյուր դիտարկվեցին Պարսից ծոցի երկրներից առաքումները: Օգտվելով առաջացած պատեհ առիթից՝ Թուրքիան իրեն առաջարկեց որպես նավթի փոխադրման տարանցման երկիր: Ծագեց «Ջեյհան-Սամսուն» նախագիծը: Համաձայն այդ պլանի՝ տվյալ խողովակաշարով իրաքյան նավթը պետք է հասցվեր Սև ծով, ապա հեղուկանավերի միջոցով՝ մինչև Օդեսա, որտեղից էլ Օդեսա-Բրոդի նավթամուղով՝ դեպի Եվրոպա:

Թուրքիայում ածխաջրածինները բավական քիչ են, իսկ ահա նրա արևելյան ու հարավային հարևանները տիրապետում են ածխաջրածինների զգալի պաշարների: Միաժամանակ, Թուրքիայի արևմտյան հարևանը ԵՄ-ն է՝ աշխարհում էներգակիրների խոշորագույն ներկրողը: Թուրքիան Արևելքի ու Արևմուտքի, Հյուսիսի ու Հարավի միջև վերածվում է էներգետիկ միջանցքի:

Մեծ գումարներ վաստակելով նավթի տարանցումից՝ Թուրքիան խորապես շահագրգռված է հարևան երկրներում կայունության պահպանմամբ և ստատուս-քվոյի պահպանմամբ: Անկարան ակտիվորեն մասնակցելու է տվյալ երկրներում առաջացած հակամարտությունների կարգավորմանը, որպեսզի դրանք չվտանգեն էներգետիկ առաքումների անվտանգությամբ: Մյուս կողմից՝ Թուրքիան ԵՄ-ի համար աստիճանաբար առավել կարևոր երկիր է դառնում: Ներկայումս ԵՄ-ը ակտիվորեն փնտրում է ածխաջրածինների աղբյուրների դիվերսիֆիկացման տարբերակներ, որպեսզի նվազեցնի իր ավանդական մատակարարից՝ Ռուսաստանից սեփական կախվածությունը (Արևմուտքում շատերը վախենում են Ռուսաստանից՝ այն համեմատելով նույնիսկ Ալ-Քաիդայի հետ): Այս առումով Թուրքիան ԵՄ-ի համար իսկական փրկություն է: Էներգետիկ տարանցումը կարող է դառնալ այն գլխավոր հաղթաթուղի, որն անգամ եթե չապահովի Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին, ապա զգալիորեն կարագացնի այդ գործընթացը:

Ներկայումս Թուրքիան սկսել է սնծովյան նավթահանքերի հետախուզման գործընթացը: Այս նպատակով առաջիկա տարիներին պատրաստ է ծախսել համարյա 8 մլրդ դոլար: Սև ծովը համարվում է աշխարհի միակ չհետախուզված վայրը: Վաղուց Սև ծովը չի տեսել լայնամասշտաբ ծովային ճակատամարտեր, և եթե հանկարծ Սև ծովում ի հայտ գան ածխաջրածինների զգալի պաշարներ, ապա դա կարող է տարածաշրջանում արմատականորեն փոխել աշխարհաքաղաքական իրավիճակը: Դա կարող է հիմք դնել բազմաթիվ թաքնված հակամարտությունների ու հակասությունների:

Այսպիսով, չնայած նեղուցներում անընդհատ առաջացող խցանումներին՝ կարելի է կարծել, որ հեղուկանավը մեկ անգամ նավթ լցնելը և հասցնելը, ասենք, իտալական Աուգուստա նավահանգիստ, ավելի էժան է նստում, քան Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս նավթամուղի պարագայում. նախ նավթը Նովոռոսիյսկում ուղղվում է հեղուկանավ, ապա Բուրգաս հասնելուց հետո՝ խողովակաշար, ինչից հետո այն նորից լցվում է հեղուկանավ: Այս ամենին պետք

է հավելել նաև այն, որ երկու երկրի (Բուլղարիա ու Հունաստան) պետք է վճարել տարանցման համար:

Ամենայն հավանականությամբ Սամսուն-Ջեյհան նավթամուղի պարագայում նավթի սակագներն առավել մեղմ կլինեն, քան Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս նավթամուղի դեպքում: Բացառված չէ, որ ռուսական ընկերությունները նեղուցների շրջանցման հարցում նախընտրեն թուրքական տարբերակը: Իսկ դա կնշանակի Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս նախագծի կատարյալ ձախողում: Հնարավոր է, որ թուրքերի հետ պայմանավորվելն առավել հեշտ լինի, քան բուլղարների ու հույների: Սակայն ռազմավարական տեսանկյունից այս տարբերակը քիչ հավանական է: Դա Թուրքիային հնարավորություն կընձեռի տարածաշրջանում նավթի տարանցումն ամբողջովին կենտրոնացնել սեփական ձեռքերում, քանի որ Թուրքիան ունի նեղուցներ, ԲԹՋ և այժմ էլ ցանկանում է ունենալ Սամսուն-Ջեյհան: Հազիվ թե արժե Թուրքիան հզորացնել որպես տարանցման երկիր, քանի որ այդ դեպքում արդեն այն կարող է սակագներ թելադրողի դերում հանդես գալ: Բացի այդ, Թուրքիան տվյալ տարածաշրջանում ԱՄՆ շահերի ուղեկցորդն է: Դա նշանակում է, որ ԲԹՋ-ի նման՝ Սամսուն-Ջեյհանը կվերածվի ԵՄ-ի, ինչպես նաև նրա մատակարարների վրա ամերիկյան ազդեցության գործիքի: ԱՄՆ-ին ձեռնտու է, որ Եվրոպան մշտապես խնդիրներ ունենա էներգամատակարարման հարցերում, ինչը կնվազեցնի ԵՄ մրցունակությունը:

Ներկայումս Թուրքիան սկսել է մերձենալ արաբական երկրների հետ: Եվ եթե շատ ձգձգվի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը, ապա երկիրը կարող է հայացքն Արևմուտքից ուղղել Արևելք և նավթային շանտաժի ենթարկել Բրյուսելին:

*Հայկ Գաբրիելյան*

## ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ-ԱՂԲԵՋԱՆ-ԻՐԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կասպից ծովը ռազմավարական նշանակություն ունի ավամերձ բոլոր երկրների համար. սա է հավանաբար պատճառը, որ չնայած 17 տարի շարունակվող բանակցային գործընթացին, երկրներին այդպես էլ չի հաջողվում գալ ընդհանուր հայտարարի: Սակայն նավթի շահագործման անհրաժեշտությունը շատերին ստիպեց գնալ, այսպես կոչված, սեպարատ պայմանագրերի կնքման: Անցած դարի 90-ականների վերջին Ռուսաստանը, Ղազախստանը և Ադրբեջանը, սկզբում առանձին-առանձին, իսկ ավելի ուշ՝ եռակողմ պայմանագիր կնքեցին Կասպիցի բաժանման շուրջ: Սակայն կասպյան «սեպարատիզմը» այսպիսով էլ ավարտվեց, մյուս երկրները հրաժարվեցին նման քաղաքականությունից՝ հայտարարելով, որ միայն հնգակողմ միացյալ պայմանագիրը կարող է իրական ուժ ունենալ և ճանաչվել որպես միջազգային իրավական փաստաթուղթ: Այսինքն, եթե Կասպից ծովի հյուսիսում կողմերին, թեկուզ և «սեպարատ» համաձայնագրով, հաջողվեց միջազգային-իրավական ինչ-որ կարգավիճակ ստեղծել, ապա հարավում իրադրությունն ավելի բարդ է: Թուրքմենստանը, Իրանը և Ադրբեջանը ոչ մի կերպ չեն կարողանում գալ ընդհանուր հայտարարի թե՛ Կասպիցի բաժանման հարցում և թե՛ ծովով անցնող սահմանամերձ խնդիրների շուրջ:

Կասպից ծովի կարգավիճակի շուրջ բանակցային ողջ գործընթացում Թուրքմենստանը, կարելի է ասել, վարում էր հավասարակշռված քաղաքականություն, շատ դեպքերում՝ պատրաստ որոշ զիջումների, եթե դրանք կնպաստեն հարցի կարգավորմանը: Այս մոտեցումը բացատրվում էր ոչ միայն երկրի որդեգրած չեզոք քաղաքականությամբ, այլ նաև նրանով, որ չէր ուղղորդվում Ռուսաստանի կամ Արևմուտքի շահերով և չէր փորձում կատարել նրանց քաղաքական պատվերը, որը կարող էր ունենալ հակաիրանական կամ հակատուսական ուղղվածություն: Նկատենք, որ հենց նշված «ուղղորդվածությամբ» էր պայմանավորված Ադրբեջանի, այսպես կոչված, «կոշտ» դիրքորոշումը ծովի բաժանման հարցում: Սակայն պաշտոնական Աշգաբադի դիրքորոշումը կտրուկ փոխվեց, երբ կնքվեց ռուս-ղազախական (1998թ.) հայտնի սեպարատ պայմանագիրը: Թուրքմենստանի նախագահ Սափարմուրադ Նիյազովը հրապարակեց N3467 որոշումը՝ «Կասպից ծովի ավամերձ շրջանի թուրքմենական հատվածի ելակետային գծերի որոշման աշխարհագրական կոորդինատների հաստատման մասին»<sup>1</sup>: Այսպիսով, կարող ենք ասել, որ այս որոշմամբ Թուրքմենբաշին ընդունեց ծովի հատվածային բաժանման սկզբունքը, սակայն մեկ պայմանով, որ ծովի միջին մասի բաժանարար գծի որոշման ժամանակ հաշվի չառնվի Ափշերոնյան թերակղզու գործոնը: Սա բացատրվում էր նրանով, որ Կասպիցի մեջ խորացած Ափշերոնը, Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև ծովի կենտրոնական մասի միջին գծի որոշման ժամանակ, այդ գիծն ընդհուպ մոտեցնում էր Թուրքմենստանի ավին: Բաժանման հենց այս սկզբունքն է, որ լուրջ տարածայնություններ է առաջացնում երկու երկրների միջև: Ադրբեջանի օրինակով սեփականաշնորհելով ծովի ավամերձ շրջանը՝ Թուրքմենստանի նախագահն այն կոչեց իր անունով: Այսպիսով, այդ նոր շրջանում հայտնվեցին Քյափազ (Նիյազովն այն վերանվանեց Սարդար), Ազերի (թուրքմենական տարբերակով՝ Օսման) և Չիրաք (Խազար) նավթահորերը, որոնք Ադրբեջանը համարում է իր սեփականությունը: Նկատենք, որ նշված նավթահանքերն աշխարհագրորեն ավելի մոտ են գտնվում թուրքմենական, քան ադրբեջանական ավին, սակայն դեռ Խորհրդային Միության օրոք դրանք հանձնվել էին ադրբեջանական կողմին՝ շահագործման համար: Ելնելով ստեղծված քաղաքական իրավիճակից՝ պաշտոնական Աշգաբադը կտրուկ փոխեց իր քաղաքականությունը և հրաժարվելով ծովի ընդհանուր օգտագործման գաղափարից՝ որոշեց սահմանել իր հատվածը՝ հետագա շահագործման համար: Այս իրավիճակը հատկապես սրեց

<sup>1</sup> Бутаев А., Каспий: зачем он Западу? <http://www.caspiy.net/>

հարաբերություններն Ադրբեջանի հետ, որն արդեն սկսել էր վերը նշված նավթահորերի շահագործումը և նույնիսկ որոշակի պայմանավորվածություններ ուներ միջազգային մի քանի ընկերությունների հետ: Թուրքմենստանը, համաձայնելով Կասպիցի հատակի բաժանման գաղափարին, միաժամանակ դեմ էր ջրային հատվածի բաժանմանը: 2001թ. Թուրքմենստանի նախագահը հայտարարեց, թե «ինչ վերաբերում է ջրային հատվածին, ապա Ազգաբաղն առաջարկում է, որ ավամերձ երկրներն ունենան 12 մղոնանոց ավամերձ շրջան՝ գումարած 35 մղոն տնտեսական հետաքրքրությունների գոտին: Այսպիսով, 47 մղոնանոց գոտին դառնում է ավամերձ բոլոր երկրների հետաքրքրությունների, իսկ ծովի մնացած մասը՝ ընդհանուր նավարկության գոտի»: Ադրբեջանը, իր հերթին, Թուրքմենստանի ղեկավարի նման դիրքորոշումը համարում էր կոշտ և անընդունելի: Ըստ նրանց՝ Թուրքմենստանի որդեգրած «սկզբում՝ Կասպիցի կարգավիճակի հարցը և հետո միայն՝ մնացած հարցերը, այդ թվում՝ վիճելի հանքավայրերի բաժանման հարցը»<sup>1</sup> դիրքորոշումը նշանակում է, որ Ազգաբաղը դեմ է վիճելի հանքավայրերի շուրջ առաջացած խնդիրներն Ադրբեջանի հետ լուծելուն: Ադրբեջանա-թուրքմենական սրվող հարաբերությունների պայմաններում պաշտոնական Բաքուն կարևորում էր Արևմուտքի և հատկապես ԱՄՆ դիրքորոշումը: Այդ ժամանակաշրջանում արդեն կնքված էր Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման պայմանագիրը, և Վաշինգտոնն ուղղակի հետաքրքրություններ ուներ տարածաշրջանում: Հասկանալով այս ամենը՝ Բաքուն ակտիվորեն փորձում էր ստանալ Սպիտակ տան աջակցությունը Թուրքմենստանի հետ բանավեճում: 2003 և 2004թթ. Ադրբեջանը ԱՄՆ աջակցությամբ երկու ռազմածովային զորավարժություններ իրականացրեց Կասպից ծովում ինչը հասկանալի կերպով առաջացրեց ավամերձ մյուս երկրների և հատկապես Ռուսաստանի, Իրանի ու Թուրքմենստանի դժգոհությունը<sup>2</sup>: Ինչպես նշեցինք, սեպարատ պայմանավորվածությունները լուրջ դժգոհություն առաջացրին Իրանի և Թուրքմենստանի ղեկավարության շրջանում. 1998թ. հուլիսի 8-ին երկու երկրների նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ նշեցին, որ «ավամերձ երկրների միջև, ծովի հատվածային բաժանման դեպքում, որպես հիմք պետք է հանդես գա Կասպիցի պաշարների արդար և հավասար բաժանման սկզբունքը»: Փաստորեն, անուղղակիորեն, բայց համաձայնելով ծովի հատվածային բաժանման սկզբունքին, Իրանը նույնպես ձեռնամուխ եղավ իր ավամերձ շրջաններում հետախուզական և արդյունահանման լուրջ քայլեր կատարել: Սակայն նկատենք, որ ըստ Իրանի «հատվածային» բաժանման՝ ծովն ավամերձ երկրների միջև պետք է բաժանվեր հավասար՝ 20%, սկզբունքով: 2002-ից Իրանը, Կասպից ծովի ավամերձ Նեկա նավահանգստում սկսեց կառուցել նավթային հորատող առաջին պլատֆորմը, որը նախատեսել էր շահագործման հանձնել 2006թ.<sup>3</sup>: Բացի նավթի արդյունահանման գործընթացից, Իրանը նաև սկսեց ակտիվորեն զբաղվել Կասպից ծովում սեփական ռազմական նավատորմի ստեղծմամբ: 2003թ. նոյեմբերին Իրանը Պարսից ծոցից Կասպից ծով փոխադրեց մի քանի ռազմանավեր, այդ թվում հրթիռակիր մի նավ: Հենց այդ շրջանում էր, որ Կասպիցի ընդերքում գտնվող նավթով հարուստ մի շարք շրջանների շուրջ լրջորեն սրվեցին հարաբերություններն Իրանի և Ադրբեջանի միջև: Մասնավորապես, թե՛ Բաքուն և թե՛ Թեհրանն իրենց հավակնություններն էին ներկայացնում Ալով-Շարք-Արագ կոչվող հանքավայրերի նկատմամբ: Իրենց հերթին Ռուսաստանը, Ղազախստանը և Ադրբեջանը որոշակի տարածայնություններ ունեին Կասպից ծովում գտնվող, «ցենտրալնի» կոչվող տարածքների նկատմամբ, որոնք, ըստ երկրաբանների, կարող են հարուստ լինել էներգապաշարներով<sup>4</sup>: Ասենք, որ սրանք միակ շրջանները չէին, որոնց պատկանելության շուրջ մերձկասպյան երկրները լուրջ տարածայնություններ ունեն, և այս ցուցակը դեռ երկար կարելի է

<sup>1</sup> *Переплесин М., Яшин Е.*, Испытание морем. На Каспий делят не только нефть, но и политическое влияние // Независимая газета, 2000, 24 октября.

<sup>2</sup> *Բախշյան Կ.*, Մերձկասպյան երկրները զինվում են, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 21.02. 2004թ., N 29 (3408):

<sup>3</sup> ИА REGNUM «Новости», Иран начинает бурение скважин в Каспийском море [www.regnum.ru/news/638640.html](http://www.regnum.ru/news/638640.html) 11:05 12.05.2006

<sup>4</sup> *Бутаев А.*, Проблема политико-правового статуса Каспийского моря // Мировая энергетическая политика, 2002.

շարունակել: Կասպից ծովի կարգավիճակի շուրջ առկա տարաձայնությունների ու միմյանց նկատմամբ տարածքային հավակնությունների պայմաններում Կասպից ծովի ավազանի երկրները շարունակում են զինվել՝ ստեղծելով իրենց ռազմական նավատորմները: Իր հերթին ծովային նավատորմն ուժեղացնում էր նաև չեզոքություն հայտարարած Թուրքմենստանը, վերջինս Ուկրաինայից արդեն գնել էր տասը հատ «Կալականով» և «Գրիֆ» կոչվող ռազմական մոտորանավակներ և պատրաստվում ավելացնել ռազմածովային ուժերում ծառայող նավաստիների թիվը՝ հասցնելով մինչև 3 հազարի: Այս ռազմական մրցակցությանը մեծապես նպաստում է Միացյալ Նահանգները, որն այս հարցում ակտիվորեն ֆինանսավորում և օգնում է ոչ միայն Ադրբեջանին, այլ նաև Ղազախստանին: Սակայն նկատենք, որ չնայած Կասպից ծովում առկա ռազմական սրվող մրցակցությանը, մինչ օրս ամենամեծ ռազմական նավատորմն ունի Ռուսաստանը, որն այս հարցում լուրջ առավելություն ունի ավիամերձ մյուս երկրների նկատմամբ, և վերջիններս դժվար թե մոտ ապագայում կարողանան մրցակցություն ներկայացնել ռուսական ռազմական նավատորմիդին: Կասպից ծովում սկսված ռազմական մրցավազքը լրջորեն ազդում է նաև բանակցային գործընթացի վրա: Սա նաև որոշակի կասկածամտություն ու անվստահություն է առաջացնում ավիամերձ երկրների և հատկապես Իրանի Իսլամական Հանրապետության մոտ, որն էլ ավելի է կոշտացնում դիրքորոշումը՝ մասնավորապես դեմ հանդես գալով ծովի ընդերքով խողովակաշարերի հնարավոր կառուցման ծրագրերին: Այս մասին մասնավորապես կարծիք հայտնեց Ղազախստանում Իրանի դեսպան Բամին Մեհմանպարաստը՝ նշելով, որ «հարցն ուղղակիորեն կախված է Կասպիցի կարգավիճակի անորոշությունից և բնապահպանության բնագավառում գոյություն ունեցող խնդիրներից»<sup>1</sup>: Ավելի ուշ Կասպից ծովով հնարավոր գազամուղի կառուցման գաղափարի մասին արտահայտվեց արդեն Ադրբեջանում Իրանի դեսպան Նասիր Ղամիդ Ջաիրին՝ նշելով, որ «Իրանը հանդես է գալիս Կասպից ծովի մաքրության օգտին և կարծում է, որ ամենաարդի տեխնոլոգիաներն անգամ չեն կարող ապահովագրել հնարավոր աղետից»<sup>2</sup>:

Այսպիսով, չնայած 17 տարի է անցել, բայց Իրանը և Ադրբեջանը ոչ մի կերպ չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ ծովի կարգավիճակի հարցում: Նույնն է նաև իրավիճակը Ադրբեջան-Թուրքմենստան հարաբերություններում: Այս տարվա փետրվարին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում երկու երկրների արտաքին գործերի փոխնախարարների մակարդակով ընթացող բանակցություններն այդպես էլ ոչնչի չհանգեցրին: Պաշտոնական Աշգաբադը շարունակում է պնդել, որ համաձայն է Կասպից ծովի բաժանմանը միջին գծով, սակայն գտնում է, որ այդ «գիծն» ավելի մոտ պետք է լինի ադրբեջանական ափին<sup>3</sup>: Սա նշանակում է, որ Ադրբեջանի կողմից ներկայումս ծովի կենտրոնական մասում շահագործվող նավթահորերը կանցնեն Թուրքմենստանին: Հասկանալի է, որ պաշտոնական Բաքուն չի գնա նման քայլի: Այսինքն՝ չնայած անցած 17 տարիներին, Կասպից ծովի հարավի երկրները՝ Թուրքմենստանը, Իրանը և Ադրբեջանը, այդպես էլ չկարողացան թուլացնել առկա լարվածությունը: Հետևաբար, մենք կշարունակենք ակնատեսը լինել ծովի հետագա ռազմականացմանը և ավիամերձ երկրների նավատորմիդների հզորացմանը:

*Արմեն Մանվելյան*

<sup>1</sup> ИА REGNUM «Новости», Тегерану не нравится проект прокладки морского нефтепровода: [www.regnum.ru/news/640243.html](http://www.regnum.ru/news/640243.html) 15.05.2006

<sup>2</sup> ИА REGNUM «Новости», Иран против Транскаспийского газопровода, но готов отменить визовый режим с Азербайджаном, [www.regnum.ru/news/931541.html](http://www.regnum.ru/news/931541.html) 13.12.2007

<sup>3</sup> ИА REGNUM «Новости», Азербайджан и Туркмения делят Каспий в Баку, [www.regnum.ru/news/953309.html](http://www.regnum.ru/news/953309.html) 06.02.2008

## ՀԻՂՐՈՒՆԵՐԳԵՏԻԿԱ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիդրոէներգետիկան էներգետիկայի վերականգնվող աղբյուրներից է, այն արտադրական կորուստներ չունի և չի արտադրում ածխաթթու գազ: Ներկայում հիդրոէլեկտրաէներգիան ապահովում է շուրջ 715.000 ՄՎտ էլեկտրաէներգիա, ինչը կազմում է համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության մոտավորապես 19-20%-ը (2003թ. դրությամբ այդ ցուցանիշը 16% էր): 2005թ. դրությամբ այն կազմում էր էներգետիկ վերականգնվող աղբյուրներից ստացվող ընդհանուր էլեկտրաէներգիայի ավելի քան 63%-ը:

Ստորև ներկայացված են հիդրոէլեկտրաէներգիայի ամենապոտենցիալ ռեսուրսներ ունեցող երկրները, տրվում է յուրաքանչյուր պետության հիդրոէլեկտրաէներգիայի տարեկան արտադրության և հիդրոէլեկտրակայանների սահմանված հզորության վիճակագրությունը (նշենք, որ հիդրոէլեկտրակայանները տարեկան կտրվածքով հազվադեպ են շահագործվում իրենց ողջ հզորությամբ): Աղյուսակում ներկայացված է նաև արտադրողականության ծանրաբեռնվածության գործակիցը, որը էլեկտրաէներգիայի տարեկան միջին արտադրության և սահմանված հզորության հարաբերակցությունն է: Վիճակագրության համաձայն, 2006թ. նշված երկրների հիդրոէլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը միասին վերցրած հաշվվում էր շուրջ 2145,7 ՏՎտ/ժամ, ինչը կազմում էր հիդրոէլեկտրաէներգիայի համաշխարհային տարեկան արտադրության (2994 ՏՎտ/ժամ) գերակշիռ մասը՝ 71.6%: Նշված երկրների շարքում առավելագույն ցուցանիշը պատկանում է Չինաստանին, որը 2006թ. դրությամբ արտադրել էր տարեկան 486,7 ՏՎտ/ժամ հիդրոէլեկտրաէներգիա, ինչն իր հերթին կազմում էր համաշխարհային հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության 16,2%-ը:

*Աղյուսակ 1*

*Հիդրոէներգետիկ պոտենցիալ ամենամեծ կարողություններ ունեցող երկրները, 2006թ.*

Երկիր	Հիդրոէլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը, ՏՎտ/ժամ <sup>1</sup>	Սահմանված հզորությունը, ԳՎտ	Ծանրաբեռնվածության գործակիցը
Չինաստան	486,7	145,26	0,37
Կանադա	350,3	88,974	0,59
Բրազիլիա	349,9	69,080	0,56
ԱՄՆ	291,2	79,511	0,42
Ռուսաստան	157,1	45,000	0,42
Նորվեգիա	119,8	27,528	0,49
Հնդկաստան	112,4	33,600	0,43
Ճապոնիա	95,0	27,229	0,37
Շվեդիա	61,8	-	-
Ֆրանսիա	61,5	25,335	0,25
Վենեսուելա	60	-	-
Համաշխարհային <sup>2</sup>	2994	-	-

*Աղբյուրը՝ BP Annual report 2006*

<sup>1</sup> 1 տերավատ/ՏՎտ = 1 մլրդ կիլովատ

<sup>2</sup> Համեմատության համար նշենք, որ 1973թ. հիդրոէլեկտրաէներգիայի համաշխարհային տարեկան արտադրությունը կազմում էր 1295 ՏՎտ/ժամ, ինչն ավելի քան կրկնակի ցածր է 2006թ. տվյալից:

Աղյուսակ 2-ում տրվում է վերջին տասնամյակում աշխարհում կառուցման ընթացքում գտնվող համեմատաբար խոշոր ՀԷԿ-երի ցուցակը: Վիճակագրությունից պարզ երևում է, որ այդ ՀԷԿ-երի ճնշող մեծամասնությունը կառուցվում է Չինաստանում, երկուական ՀԷԿ-եր՝ Ռուսաստանի Դաշնությունում, մեկական՝ Արգենտինայում, Վենեսուելայում և Հնդկաստանում: Կառուցման փուլում գտնվող ՀԷԿ-երի շարքից արտադրական առավելագույն հզորությամբ առանձնանում է չինական Ֆրի Ջորջես Դեմը՝ 22,500 ՄՎտ, որի կառուցողական աշխատանքները ծրագրված է ավարտել 2009թ.:

Աղյուսակ 2

Վերջին տարիներին աշխարհում կառուցվող համեմատաբար խոշոր ՀԷԿ-երը, դրանց հզորությունը

N	Անվանումը	Երկիրը	Առավելագույն հզորությունը, ՄՎտ	Կառուցման մեկնարկը	Նախատեսվող ավարտը
1.	Ֆրի Ջորջես Դեմ	Չինաստան <sup>1</sup>	22,500	1994/դեկտ.	2009
2.	Խիլուոդու Դեմ	Չինաստան	12,600	2005/դեկտ.	2015
3.	Լոնգթեն Դեմ	Չինաստան	6,300	2001/հուլիս	2009/դեկտ.
4.	Խիանգջիաբա Դեմ	Չինաստան	6,000	2006/նոյեմբ.	2015
5.	Նուոգհադու Դեմ	Չինաստան	5,850	2006	2017
6.	Ջինփինգ 2 ՀԷԿ	Չինաստան	4,800	2007/հունվ.	2014
7.	Լաքսիվա Դեմ	Չինաստան	4,200	2006/ապրիլ	2010
8.	Խիաովան Դեմ	Չինաստան	4,200	2002/հունվ.	2012/դեկտ.
9.	Ջինփինգ 1 ՀԷԿ	Չինաստան	3,600	2005/նոյեմբ.	2014
10.	Փուբուգոու Դեմ	Չինաստան	3,300	2004/մարտ	2010
11.	Գոուփիթրն Դեմ	Չինաստան	3,000	2003/նոյեմբ.	2011
12.	Բոգուչան Դեմ	Ռուսաստան	3,000	1980	2012
13.	Չափեթոն	Արգենտինա	3,000		
14.	Ջինանքյաո Դեմ	Չինաստան	2,400	2006/դեկտ.	2010
15.	Գուանդի Դեմ	Չինաստան	2,400	2007/նոյեմբ.	2012
16.	Տոկոմա	Վենեսուելա	2,160	2004	2014
17.	Բուբեյա Դեմ	Ռուսաստան	2,010	1978	2009
18.	Ահայ Դեմ	Չինաստան	2,000	2006/հուլիս	
19.	Լոուվեր Սուբանսիբի Դեմ	Հնդկաստան	2,000	2005	2009

Աղյուսակ 3

Ենթադրվող/proposed համեմատաբար խոշոր հիդրոէլեկտրաէներգետիկ նախագծերը

N	Անվանումը	Երկիրը	Առավելագույն հզորությունը, ՄՎտ	Կառուցման մեկնարկը	Նախատեսվող ավարտը	Ծանոթագրություն
1.	Բեդ Սի (Կարմիր ծով) Դեմ	Մերձ. Արևելք	50,000	անհայտ	անհայտ	նախագծման փուլում է
2.	Բայեթթըն Դեմ	Չինաստան	12,000	2009	2015	նախագծման փուլում է
3.	Վուդոնգդե Դեմ	Չինաստան	7,000	2009	2015	նախագծման փուլում է
4.	Մեջի Դեմ	Չինաստան	4,200	2008	2013	
5.	Սոնգթա Դեմ	Չինաստան	4,200	2008	2013	
6.	Լիանգջյարեն Դեմ	Չինաստան	4,000	2009	2015	նախագծման փուլում է

<sup>1</sup> Ֆրի Ջորջես Դեմը աշխարհում խոշորագույն հիդրոէլեկտրաէներգետիկ համակարգն է:



N	Անվանումը	Երկիրը	Առավելագույն հզորությունը, ՄՎտ	Կառուցման մեկնարկը	Նախատեսվող ավարտը	Ծանոթագրություն
7.	Զիրաու Դեմ	Բրազիլիա	3,300	2007	2012	
8.	Փեթի Դեմ	Արգենտինա	3,300			
9.	Սանտո Անտոնիո Դեմ	Բրազիլիա	3,150	2007	2012	
10.	Գուանյինյան Դեմ	Չինաստան	3,000	2009	2015	նախագծման փուլում է
11.	Լիանգհեբոու Դեմ	Չինաստան	3,000	2009	2015	
12.	Լոուեր Չերչիլ	Կանադա	2,800	2009	2014	
13.	Լիյուան Դեմ	Չինաստան	2,400	2008		
14.	Դազանգզան Դեմ	Չինաստան	2,300	2009	2015	
15.	Չանգհեբա Դեմ	Չինաստան	2,300	2009	2015	
16.	Լուդիլա Դեմ	Չինաստան	2,100	2009	2015	

Աղբյուրը՝ BP Annual report 2006

Աղյուսակ 4-ում ներկայացված է աշխարհում խոշորագույն ՀԷԿ-երի վիճակագրությունը: Ինչպես արդեն նշվեց, չինական Ֆրի Ջորջես Դեմը աշխարհի խոշորագույն հիդրոէլեկտրակենտրոնիկ համակարգն է՝ 22.500 ՄՎտ հզորությամբ: Վերջինիս հզորությամբ հաջորդում են 1998թ. կառուցված Յակիբետա (Արգենտինա/Պարագվայ) ՀԷԿ-ը՝ 14,050 ՄՎՏ, Իտայպու (Բրազիլիա/Պարագվայ) ՀԷԿ-ը՝ 14,000 ՄՎտ, 1986թ. կառուցված վենեսուելական Գուրի ՀԷԿ-ը՝ 10,200 ՄՎտ: Նշված ՀԷԿ-երի շարքում ոչ այնքան մեծ արտադրողական պոտենցիալ ունեն նաև 1990թ. կառուցված թուրքական Աթաթուրք Դեմ ՀԷԿ-ը՝ 2,400 ՄՎՏ, իրանական երեք ՀԷԿ-երը՝ կառուցված համապատասխանաբար 1976, 2001 և 2007թթ., որոնք ունեն 2,000-ական ՄՎՏ հզորություն: ԱՊՀ երկրների շարքում, բացի Ռուսաստանից, առանձնացված է նաև Տաջիկստանի Նուրեկ Դեմ ՀԷԿ-ը՝ 3,000 ՄՎՏ հզորությամբ: Աղյուսակ 4-ում առանձնացված 40 ՀԷԿ-երից 6-ական ՀԷԿ պատկանում են Միացյալ Նահանգներին, Ռուսաստանին և Կանադային, 5-ը՝ Բրազիլիային (ևս մեկը համատեղ է Պարագվայի հետ), 4-ը՝ Չինաստանին, 3-ը՝ Իրանին, 2-ը՝ Վենեսուելային, իսկ մյուսներն ունեն մեկական ՀԷԿ:

Աղյուսակ 4

Աշխարհի խոշորագույն ՀԷԿ-երը

N	Անվանումը	Երկիրը	Կառուցման ավարտը	Ընդհանուր կարողությունները, ՄՎտ	Էլեկտրաէներգիայի տարեկան առավելագույն արտադրությունը, ՏՎտ/ժամ
1.	Ֆրի Ջորջես Դեմ	Չինաստան	2009	14,800 (2007/դեկտ.) 22,500 (ավարտին)	>100
2.	Յակիբետա	Արգենտինա/Պարագվայ	1998	14,050	19,2
3.	Իտայպու	Բրազիլիա/Պարագվայ	1984/1991/2003	14,000	103,45
4.	Գուրի	Վենեսուելա	1986	10,200	46
5.	Տուկուրույ	Բրազիլիա	1984	7,960	21
6.	Գրանդ Քոուլի	ԱՄՆ	1942/1980	6,809	22,6
7.	Սայանո	Ռուսաստան	1983	6,721	26,8

N	Անվանումը	Երկիրը	Կառուցման ավարտը	Ընդհանուր կարողությունները, ՄՎտ	Էլեկտրա- էներգիայի տարեկան առավելա- գույն արտադրու- թյունը, ՏՎտ/ժամ
	Շուշենակի				
8.	Կրասնոյարսկի	Ռուսաստան	1972	6,000	20,4
9.	Ռոբերտ- Բոուրասս	Կանադա	1981	5,616	
10.	Չերչիլ Ֆոլս	Կանադա	1971	5,429	35
11.	Բրատսկի	Ռուսաստան	1967	4,500	22,6
12.	Ուստ Իմսկի	Ռուսաստան	1980	4,320	21,7
13.	Տարբելա Դեմ	Պակիստան	1976	3,478	
14.	Էրթան Դեմ	Չինաստան	1999	3,300 (550×6)	17,0
15.	Իհա Սոլտեյրա Դեմ	Բրազիլիա	1974	3,200	
16.	Խինգո	Բրազիլիա	1994/1997	3,162	
17.	Գեզհոուրա Դեմ	Չինաստան	1988	3,115	17,01
18.	Նուրեկ Դեմ	Տաջիկստան	1979/1988	3,000	
19.	Լա Գրանդե-4	Կանադա	1986	2,779	
20.	Բեննեթ Դեմ	Կանադա	1968	2,730	
21.	Չիֆ Ջոզեֆ Դեմ	ԱՄՆ	1958/73/79	2,620	
22.	Վոլժսկի	Ռուսաստան	1961	2,541	12,3
23.	Նիագարա Ֆոլս	ԱՄՆ	1961	2,515	
24.	Պաուլո Աֆոնսո IV Դեմ	Բրազիլիա	1955	2,462	
25.	Լա Գրանդե-3	Կանադա	1984	2,418	
26.	Աթաթուրք Դեմ	Թուրքիա	1990	2,400	
27.	Ժիգուլյովսկի	Ռուսաստան	1957	2,300	10,5
28.	Իրոն Գեյթս-I	Ռումինիա/Մեր բիա	1970	2,216	13
29.	Կարուաչի	Վենեսուելա	2006	2,160	12,95
30.	Ջոն Դեյ Դեմ	ԱՄՆ	1971	2,160	
31.	Լա Գրանդե-2-Ա	Կանադա	1992	2,106	
32.	Ասուան	Եգիպտոս	1970	2,100	
33.	Իթումբիարա	Բրազիլիա	1980	2,082	
34.	Հուվեր Դեմ	ԱՄՆ	1936/1961	2,080	
35.	Կահորա Բասս	Մոզամբիկ	1975	2,075	
36.	Դը Դոլս Դեմ	ԱՄՆ	1981	2,038	
37.	Քարոն I Դեմ	Իրան	1976	2,000	
38.	Քարոն II Դեմ	Իրան	2001	2,000	
39.	Քարոն III Դեմ	Իրան	2007	2,000	4,1
40.	Լիջիաքսիա Դեմ	Չինաստան	2000	2,000	

Ստորև ներկայացված աղյուսակում տրվում է առաջատար այն 10 երկրների ցանկը, որոնց ներքին էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրությունում հիդրոէլեկտրաէներգետիկ սեկտորը համեմատաբար զգալի մասնաբաժին է կազմում: Այսպես, առանձնացված երկր-

ների շարքում առաջատար 4-ը իրենց էլեկտրաէներգիայի ճնշող մասը ստանում են հիդրո-էլեկտրաէներգետիկ սեկտորի հաշվին: Նորվեգիան զբաղեցնում է առաջին դիրքը, որի էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրությունում հիդրոէլեկտրաէներգետիկ սեկտորը կազմում է գրեթե ամբողջը՝ 98,9%: Վերջինիս հաջորդում են Բրազիլիան (83,7%), Վենեսուելան (73,9%) և Կանադան՝ 57,9%:

Աղյուսակ 5

2005թ. դրությամբ 10 երկրների ներքին էլեկտրաէներգիայի արտադրությունում հիդրոէներգետիկ սեկտորի մասնաբաժինը

Երկիր	Հիդրոէներգետիկ մասնաբաժինն ընդհանուր էլեկտրաէներգիայի արտադրությունում, %
1. Նորվեգիա	98,9
2. Բրազիլիա	83,7
3. Վենեսուելա	73,9
4. Կանադա	57,9
5. Շվեդիա	46,0
6. Ռուսաստան	18,3
7. Չինաստան	15,9
8. Հնդկաստան	14,3
9. Ճապոնիա	7,8
10. ԱՄՆ	6,8
Աշխարհի մնացած հատվածը <sup>1</sup>	13,9
Համաշխարհային, ընդհ.	16,4

Աղբյուրը՝ *International Energy Agency. Key World Energy Statistics\_2007*

**Կարեն Վերանյան**  
**«Նորավանք» հիմնադրամ**

<sup>1</sup> Ներառված չեն հիդրոէներգետիկ արտադրություն չունեցող երկրները:

## НОВОСТИ ТЭК ЮЖНОГО КАВКАЗА И КАСПИЯ (9 АПРЕЛЯ – 19 МАЯ)

### **9.04.08**

#### ***В январе-марте Азербайджан повысил добычу нефти на 8%***

Добыча нефти в Азербайджане в январе-марте выросла на 7,96% и достигла 11,246 млн тонн, сообщает Day.az.

Азербайджанская международная операционная компания, разрабатывающая морской блок месторождений «Азери-Чыраг-Гюнашли», в январе-марте 2008г. добыла 9,078 млн тонн нефти.

Данная цифра на 10,35% больше, чем в январе-марте 2007г.

Как сообщили в АМОК, в структуре данного объема добыча с месторождения «Чыраг» составила 1,519 млн тонн, что на 14,08% меньше показателя за январь-март 2007 года.

Добыча нефти с месторождения «Азери» выросла на 17,03% и составила 7,559 млн тонн.

Добыча нефти ГНКАР снизилась относительно января-марта 2007г. на 1% до 2,168 млн тонн.

### **10.04.08**

#### ***В марте по нефтепроводу Баку-Тбилиси-Джейхан было транспортировано свыше 2 млн тонн азербайджанской нефти***

В марте по нефтепроводу Баку-Тбилиси-Джейхан было транспортировано 2 млн 899 тыс. 938 тонн азербайджанской нефти.

Как передает Day.az со ссылкой на пресс-службу Госнефтекомпании Азербайджана, за первые три месяца текущего года по данному нефтепроводу было транспортировано 8 млн 780 тыс. 530 тонн нефти.

В целом, с момента запуска нефтепровода Баку-Тбилиси-Джейхан по 1 апреля текущего года по нему было транспортировано 46 млн 444 тыс. 175 тонн нефти.

### **10.04.08**

#### ***Иран увеличивает объемы добычи нефти***

К концу текущего года объем добычи сырой нефти в Иране будет составлять 4 млн 270 тыс. баррелей в сутки. Об этом заявил директор Иранской национальной нефтяной компании Сейфолла Джашнсаз, отметив, что это будет на 708 тыс. баррелей больше, чем в прошедшем году.

По словам Джашнсаза, в настоящее время ежедневно добывается 4 млн 211 тыс. баррелей нефти, а к концу 4-го пятилетнего плана развития страны этот показатель должен составлять 4 млн 500 тыс. баррелей. Говоря о программах по увеличению добычи нефти в стране, Джашнсаз отметил, что намеченный рост производства будет осуществлен за счет разработки нефтяного месторождения Джофейр на западном берегу реки Карун, нефтяного месторождения Ядавалан и нефтяного месторождения Азадеган.

Джашнсаз напомнил, что 8 апреля в Иранской национальной нефтяной компании была завершена работа над контрактом по разработке нефтяного месторождения Джофейр с участием белорусской нефтяной компании, а по поводу разработки нефтяного месторождения Ядавалан ведутся переговоры с китайскими компаниями. Эти переговоры находятся на заключительной стадии, и есть надежда, что в следующем месяце они будут полностью завершены, сообщает ИА REGNUM со ссылкой на «Эконьюз».

**11.04.08**

***Туркменистан согласился поставлять газ в страны ЕС – Минфин Франции***

Туркменистан согласился поставлять газ в страны ЕС. Как передает РБК со ссылкой на *Reuters*, с таким заявлением выступил министр финансов Франции Бернар Кушнер по итогам саммита стран ЕС и Центральной Азии в Ашхабаде.

Министр финансов одобрительно воспринял данное решение и отметил, что рабочие группы на следующей неделе приступят к разработке соглашений о поставках газа из Туркменистана в страны ЕС. Также Б.Кушнер еще раз отметил, что Франция намерена сделать энергетику приоритетным направлением в ходе своего председательства в ЕС с 1 июля по 31 декабря 2008г.

Кроме того, в своем заявлении министр финансов Франции подчеркнул важность проведения дальнейших переговоров относительно строительства «энергетических коридоров» через Каспийское море.

В настоящее время по объему газовых запасов Туркменистан занимает десятое место в мире.

**11.04.08**

***Туркменистан согласился поставлять газ в страны ЕС***

Туркменистан согласился поставлять газ в страны ЕС. С таким заявлением выступил министр финансов Франции Бернар Кушнер по итогам саммита стран ЕС и Центральной Азии в Ашхабаде.

Министр финансов одобрительно воспринял данное решение и отметил, что рабочие группы на следующей неделе приступят к разработке соглашений о поставках газа из Туркменистана в страны ЕС. Также Б.Кушнер еще раз отметил, что Франция намерена сделать энергетику приоритетным направлением в ходе своего председательства в ЕС с 1 июля по 31 декабря 2008г.

Кроме того, в своем заявлении министр финансов Франции подчеркнул важность проведения дальнейших переговоров относительно строительства «энергетических коридоров» через Каспийское море.

В настоящее время по объему газовых запасов Туркменистан занимает десятое место в мире, передает «Нефть и капитал» со ссылкой на РБК.

Напомним также, что Китай сейчас приступил к строительству газопровода для поставки газа из Туркмении. Трубопровод будет соединять туркменские газовые месторождения и Синьцзян-Уйгурской автономный район Китая с провинцией Гуанчжоу на юге и Шанхаем на востоке и пройдет через 12 провинций страны.

Размеры предполагаемого объема инвестиций оцениваются в \$20 млрд (142,2 млрд юаней). Протяженность магистрального трубопровода составит 4,8 тыс. км, с учетом всех отводных линий – более 9 тыс. км. Газопровод будет способен прокачивать 30 млрд куб. м газа в год.

**11.04.08**

***Иран может занять в проекте Nabucco место Туркмении***

Иран может занять место Туркмении в проекте газопровода *Nabucco* по поставкам природного газа из бассейна Каспия в Европу в обход России, сообщил новый посол ЕС в Азербайджане Алан Ваддамс в интервью бакинскому телеканалу ANS, передает РИА Новости.

По словам Ваддамса, представители Евросоюза, находящиеся с визитом в Туркмении, утверждают, что Ашхабад согласен экспортировать свой газ в Европу по *Nabucco*, и в то же время они говорят, что, если туркменская сторона откажется от участия в проекте, то его место может занять Иран.

Представитель ЕС сказал также, что президент Туркмении Гурбангулы Бердымухаммедов на встрече с ним заявил, что его страна готова экспортировать свой газ в Европу по *Nabucco*.

По мнению ряда экспертов, без поддержки Туркмении проект нереализуем, а поставки туркменского газа по *Nabucco* маловероятны.

Газопровод *Nabucco* в обход России предусматривает ежегодную транспортировку 20-30 миллиардов кубометров природного газа из региона Центральной Азии и Азербайджана по

маршруту Турция-Болгария-Румыния-Венгрия-Австрия. Строительство магистрали планируется начать в 2010г., оно потребует инвестиции в \$7-8 млрд.

В качестве потенциальных поставщиков газа для проекта называются Азербайджан, Иран, Туркмения и в последнее время Ирак. Идею поставок иракского газа в Европу поддерживают в США.

В России скептически относятся к возможности реализации в ближайшие годы проекта *Nabucco*, прежде все в связи с тем, что перспективы заполнения магистрали газом до сих пор неясны.

Участниками-компаниями строительства проекта с равными долями по 16,67% каждая являются на данный момент австрийская *OMV*, венгерская *MOL*, болгарская *Bulgargaz*, румынская *Transgaz*, турецкий *Botas* и германский *RWE*.

#### **14.04.08**

***Бенита Ферреро-Вальднер: Туркмения с 2009 года будет поставлять ЕС 10 млрд кубометров газа в год***

Туркмения будет ежегодно с 2009г. поставлять в Евросоюз 10 миллиардов кубометров газа, сообщила комиссар ЕС по внешней политике и политике добрососедства Бенита Ферреро-Вальднер, передает РИА Новости.

«Президент (Туркмении) заверил нас, что для Европы будут отведены 10 миллиардов кубометров в дополнение к возможностям в новых областях, по которым предстоит организовать тендеры», – сказала она в интервью британской газете *Financial Times*.

Еврокомиссар назвала небольшим планируемый объем поставок, подчеркнув, что это является «очень важным первым шагом».

Ферреро-Вальднер сообщила, что Евросоюзу для преодоления технических трудностей с поставками туркменского газа предстоит либо построить небольшой трубопровод между инфраструктурами Туркменистана и Азербайджана, связав обе страны через Казахстан, либо сжижать газ и транспортировать его танкерами.

В марте газовые компании Казахстана, Узбекистана и Туркмении объявили, что с 2009г. будут продавать газ по европейским ценам.

По оценкам ряда экспертов, к концу 2008г. средняя цена оптовых поставок европейским потребителям по долгосрочным контрактам может существенно вырасти и составить 360 долларов за тысячу кубометров, по оценке «Газпрома» – до \$354.

В ЕС надеются благодаря транскаспийскому трубопроводу *Nabucco*, который задумывается как альтернатива транзиту через Россию, диверсифицировать источники топлива и снизить зависимость от российского газа (в 2007г. «Газпром» поставил в страны ЕС 151 миллиард кубометров). Проект газопровода, который еще не утвержден, позволит поставлять газ из Казахстана и Туркмении через Каспийское море, а затем Азербайджан, Грузию и Турцию в Европу в обход России. Планируется, что газ по 3300-километровому трубопроводу начнет поступать с 2012г.

#### **16.04.08**

***А.Миллер в мае 2008г. посетит Армению***

Председатель правления ОАО «Газпром» Алексей Миллер посетит Армению в мае 2008г., сообщил премьер-министр Армении Тигран Саркисян. Как передает РБК со ссылкой на агентство АРКА, в ходе визита будут обсуждаться вопросы сотрудничества. «В ходе переговоров с А.Миллером мы уточним перспективы нашего сотрудничества на предстоящие три года», – сообщил Т.Саркисян сегодня журналистам в ходе своего первого брифинга в должности главы армянского правительства.

**17.04.08**

***В текущем году на месторождении «Гюнешли» будет пробурено 7 газовых скважин***

На расширенном участке платформы №11 месторождения «Гюнешли» началось бурение газовой скважины № 78. Об этом Day.az сообщили в пресс-службе Госнефтекомпании Азербайджана.

Отметим, что платформа № 11 была введена в эксплуатацию в апреле 1986 года. Здесь функционирует 16 скважин. В декабре 2006 года к платформе присоединили дополнительный блок.

Высота этого блока составляет 113 метров, а вес 1060 тонн. Бурение осуществляется на глубине 102 метра. Согласно проекту, на блоке предусмотрено пробурить еще 6 скважин. В целом на этом месторождении предусмотрено бурение 7 новых газовых скважин.

**17.04.08**

***Создание Конвенции о правовом статусе Каспия продвигается вперед***

На очередном заседании Специальной рабочей группы по выработке Конвенции о правовом статусе Каспийского моря, проходившей в Тегеране, стороны достигли ряда подвижек. Об этом в среду сообщил РИА Новости глава российской делегации, посол по особым поручениям МИД РФ Александр Головин.

«Вчера и сегодня состоялось 22-е заседание Специальной рабочей группы на уровне замминистров по определению правового статуса Каспийского моря. Предполагается, что новый правовой статус Каспийского моря будет урегулирован в соответствующей Конвенции», – сказал российский дипломат. По его словам, переговоры в Тегеране были посвящены редактированию проекта Конвенции.

«На каждом таком заседании идет сложный переговорный процесс. По итогам этого заседания можно сказать, что мы несколько продвинулись по тексту Конвенции, убрали ряд скобок, особых позиций сторон, сумели кое-что привести к общему знаменателю», – отметил Головин.

При этом, по мнению дипломата, остаются некоторые проблемы, которые «пока являются камнем преткновения».

«Самым, пожалуй, важным вопросом, который требует урегулирования, это вопрос о разграничении акватории Каспийского моря», – подчеркнул Головин.

Он указал, что между Россией, Казахстаном и Азербайджаном уже достигнуты договоренности в отношении разграничения дна северной части Каспия в целях освоения недр моря.

«Но для того, чтобы урегулировать этот вопрос в целом, нужны договоренности в южной части – между Ираном, Азербайджаном и Туркменистаном. Там, конечно, еще сохраняются разногласия, но, в принципе, это вопрос даже не Конвенции, поскольку в ней эти вопросы будут, скорее всего, урегулированы за счет отсылки к этим соглашениям, а как раз вопрос непосредственно этих договоренностей в этом двух- и трехстороннем формате», – считает глава российской делегации.

Дипломат рассказал, что акватория Каспийского моря регулировалась только между Советским Союзом и Ираном договорами 1921 и 1940 годов. В договорах в отношении акватории существовали «по сути дела только рыболовные зоны 10-мильной ширины».

«Фактически, по смыслу этих договоров, государственная граница СССР и Ирана проходила по береговой линии, а на море государственных границ как таковых не было, были только упомянутые рыболовные зоны», – сообщил Головин.

Однако с распадом СССР и образованием самостоятельных государств эти страны не признали советско-иранские договоры и в одностороннем порядке приняли собственные законы, которые устанавливают территориальные моря, экономические и рыболовные зоны на Каспии.

«Возникли коллизии в том, как трактовать статус Каспийского моря, и стороны решили создать этот механизм, чтобы урегулировать указанные вопросы», – заявил посол по особым поручениям.

По словам Головина, кроме вопроса делимитация акватории моря, сближение позиций по которому началось после Второго каспийского саммита в Тегеране, существуют еще «большой блок неурегулированных вопросов». Такими проблемами являются: военная деятельность на

Каспии, транзит в Каспийское море и из него к открытым морям, а также вопросы прокладки транскаспийских трубопроводов.

«По этим темам позиции сторон в соответствующих статьях изложены, но консенсуса мы пока не имеем», – заключил собеседник агентства.

#### **18.04.08**

##### ***Азербайджан увеличил долю в проекте «Азери-Чыраг-Гюнешли»***

С 1 апреля доля правительства Азербайджана в проекте разработки перспективной структуры «Азери-Чыраг-Гюнешли» выросла от 50 до 75%.

Как передает АПА-Экономикс, об этом сообщил исполнительный директор Государственного нефтяного фонда Азербайджанской Республики (ГНФАР) Шахмар Мовсумов.

